


468
L III. 3



ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Տ Ա Ր Ի


1898

ԱՅՍ ՀԱՏՈՐԻՆ ԱՇԽԱՏԱԿՅԱԾ ԵՆ

Արտկարան, Արփիար Արփիարեան, Կ. Յ. Բաւանջեան,
Ֆրէնսիս Էւոչըրտ Գրօն, Երօտ, Լ. Զարբազեան, Ժ. Պ. Յրափրկիէ, Էլեկտր Լափիս,
Ժորժ Կոլիս, Հրազդան, Է. Միլլարտ, Միր-Երօ, Մօսիս Միշե,
Սըր Ճոն Մոնտեփիլ, Բիէր Մոսան, Վ. Շանկի, Արշակ Զօպանեան, Մոսիս Պառե,
Հ. Պարնըմ, Պարոյր, Սիւպրիկ, Տիկիկ Մարի Սվաձեան, Վահրամ Սվաձեան,
Վահրամ, Հ. Տրփրան, Յակոբ Օհանեան, Բ. Ա. Խոնդակտ,

ԼՈՂՏՈՂ

ՆՈՐ ԿԵԱՆՔ



ՀԱՆԳԵՍ ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ հրատարակութեան նպատակն է հայ ազգին վերածնութեանը աջակցել պատմութեան և գրականութեան միջոցաւ ալ:

Ժամանակ մը Պարոյ հայ մամուլը շատ հեղուկացաւ եւրոպական բարձրակարգութեամբ չափազանցօրէն զբաղելուն համար, «ինչ որ հայ ազգին պէս կրօնական ժողովրդի մը հետ ու եւ վերաբերութիւն չունի» կ'ըսուէր. փորձը սակայն ցոյց տուաւ թէ Թիւրքիոյ հայ ժողովրդին վիճակը սերտ կապուած է Եւրոպայի բարձրակարգութեանը և շահերուն հետ: Պարոյ օրագրութիւնը ազգին համար բարձրակարգ անաշխարհութեան կարեւորութիւնը զգալով հանդերձ չէր կրցած հետեւել բուն նպատակին ծառայող ուղղութեան. ազգրական սեղմութեանը պրիւսիան, կաշկանդուած խմբազմերը ակնարկութիւններու շնորհիւ միայն կրնային բան մը հասկցնել, ինչ որ շատ անգամ սխալ ալ կը հասկցուէր: Այս նոր հանդէսին զլիսաւոր մէկ տեսակէտը պիտի ըլլայ հայ ժողովրդին որչազափար տալ Եւրոպայի ձգտումին ու շահերուն վրայ: Հայ ազգը չունի իր ազգային բարձրակարգութիւնը ղեկավարող նախարարութիւն մը. հայ բարձրակարգութիւնը հայ ժողովրդին կը բղխի. ու երբ այդ ժողովուրդը իր ամբողջութեանը մէջ գտնուի կը մնայ բարձրակարգ պատմութեանը միջա մեծ վտանգներու կենթարկուի: Նոր կեանքը պիտի աշխատի նպատակ հայ ազգին բարձրակարգ պատմութեանը, առաջնորդուելով Եւրոպայի նշանաւոր հրատարակութիւններէն:

Պիտի ստուգասիրենք նաեւ մեր ազգային ժառանգական կալից կեանքը իր բազմաժանտեան երեւոյթներուն մէջ: Ժողովուրդ մը, մեզի պէս տառապեալ ժողովուրդ մը մանաւանդ, իր աստուային առաքինութիւններուն գիտակցութեամբն է որ պիտի սրտապնդի և գիմանայ: Խորհնացին սրբան որ ալ դառնացած բայց կը միտիմարուէր ու կ'ուսուէր յիշելով թէ «ու բազում արութիւնը բաշտութեան գործեցան յաշխաբէի մերում»: Մեր օրերն ալ շատ «արութիւնը բաշտութեան», շատ անձնութիւններու ու զոհողութիւն շոյալեցան հայ աշխարհին ամէն կողմը: Ազգային բարձրակարգութեան առաքինութիւններու յիշատակը միշտ կենդանի պահենք ու սիրենք. յուսատու Ոգին է ան մեր ակնարկութիւններուն վրայ ստանաւ: Բայց պիտի չի մոռնանք նաեւ թէ ժողովրդին ևն վատ թշնամիներուն մէջ է

անոր նկարագրին յատկութիւնները շոյել սիրողը, կամ շտեմնելու դարնել հակամիտողը. ցեղ մը կը ջլապնդի, կը զօրանայ իր կեանքին ամենախիստ քննադատութեամբը:

Նաեւ պէտք է միշտ յիշենք թէ ճղակտար սահուն կ'առաջնորդէ մեզի այն թեթեամտութիւնը որով բացազանչութիւնը՝ հայրենասիրութիւն, զոռում գոչուելը՝ ազատասիրութիւն, սենայնամիտ յոխորտանքը՝ զօրութիւն և իրարանցումը՝ յեղափոխութիւն կը համարենք, ու այս պատրանքներէն խելամուտը, կը հաւատանք թէ քանի մը հարուած կը բուեն, եթէ շատ ալ չեն, փրկել մեզի բազասարեան սարկական վիճակէն:

Քաղաքացիական առաքինութիւններու միացնելով բննոց, խորհոյ, ամէն ինչորի խորը թափանցելու միտք, ժողովուրդ մը կրնայ, ինչքան ալ ծանր վիճակի մէջ գրտնուի, ազաբայ յուսալ:

Ահա Նոր կեանքին ծրագիրը:

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ՕՐՕՐ

Դուն նստեր ևս ճամբաներուն անկիւնը.
Մազերդ ի վար իջեր կախուեր է ձիւնը.
Մարմնոյ վրայ կը փոսանան մեծ խոցեր,
Եւ աչուքներդ արիւնի լիճ են գործեր:

Դուն աշուար մայրն ևս հին հին ցաւերով.
Աղեաքը սիրտը պատեց բար խաւերով.
Քեզ սեւ հովերը կսծեցին, և գաժան
Աղջամուղջներ կեանքիդ վրայ ծանրացան:

Ո՞ր գէշ պարկեր հիւսեց թիւը բազկիդ.
Ո՞վ սեննելով բեզ տապալած ու վրախ
Պիտի յիշէ որ դուն երբեմն հրդօր
Աղջիկն էիր ուղ աչքերով լուսաւոր:

Կը ծրփային մագերդ ինչպէս գրօշ մը լայն
Ազատ լերան մէջ սր հօրից մեծածայն
Կը մըտնչէր խոյանալով սարէ սար.
Եւ ծոցդ՝ հրդարա՝ մեզր ու կախով կ'ուսնաւոր:

Քեզ ցանկացին յեղափոխները բուր,
Պաշարեցին բեզ սստիներ ահաւոր.
Ինկար, կար, երկա՛յն սաւն կուռեցար,
Մինչեւ ուժիտի տարածուեցար սղեվար...

Եւ բու հոգիդ արդաւանդ էր ու բարի,
Կործանարար ուժերուն մէջ վիժխարի .
Դուն կեանքի ծիւ մ'աւելցուցիր աշխարհին,
Մասներդ հոգէն գեղեցիութիւն հանեցին :

Դուն Անահիւսն էիր խաղաղ աչքերով,
Ոսկիամայրն էիր պայծառ լանջերով .
Ծոցէդ բարիք, նայուածքէդ լոյս կը տեղար,
Շրթներդ գաշն էին եւ ձեռքքդ ճարտար :

Եկան ժանտերն ու ձեռքիդ կապ անցուցին,
Մերկացուցին, թօշնեցուցին ծոցդ անդին .
Եւ եօթնախոց դարձար դուն Մայրը կարմիր,
Գողգոթային ճամբուն վըրայ ծնրազիր :

Ինչ գեղեցիկ, ինչ բաջ եղար ցաւին մէջ .
Կապանքիդ տակ հոգիդ մնացեր էր անշէջ .
Ահեղ լուծեր կտորտեցիր, եւ մահէն
Քանի անգամ ոտքի ելար դուն նորէն :

Աչքքդ Լոյսին կը սեւեռէր անդադար .
Մխարքդ խանգով Նոր աշխարհին կը դառնար .
Եւ դուն, անզօր, յամառեցար, առանձին,
Թումբ ձեւանալ ասիական հեղեղին :

Հեղեղն եկաւ, մեծցաւ, ճնշեց, ու վըլար .
Եւ մարեցաւ անոր տակ բոցքդ նիհար .
Չբառական, ողորմ, անյոյս, գեանամած,
Դուն մութին մէջ ըսպասեցիր գալարուած :

Գիշեր ատեն երբեմն հին խաչերը
Կ'երերային, եւ Մասիսի քաջերը
Մութին մէջէն կը շողային բարկաճայթ .
Մեծ լիճերէդ կ'ելլէր կարմիր ճառագայթ .

Օդին մէջ խուլ կը թնկային թմբուկներ .
Դուն, զոդ ելած, կ'առնէիր պահ մ'աչքքդ վեր,
Եւ խըռոված՝ կը նայէիր լեռներուն .
Բայց կուգար մութն ու նորէն պաղ լըռութիւն :

Օր մըն ալ ցաւը քեզ թօթվեց, ցցուեցար,
Եւ բոզօքել ու զիմազրել ժըտեցար .
Աշխարհ ձայնիդ խուլ մընաց, եւ ճիղդ անզօր
Ճզմուեցաւ պատուհասով մ'ահաւոր :

Կրակներ ելան, եւ ճիւաղներ ցաւրեցին,
Այրեցին կուրծքդ եւ աչուրներդ փորեցին .
Տունէդ վանուած, հովերուն տակ մընացիր,
Մերկ տարածուած, չորս զիդ արինն ու մոխիր :

Հիմա նստեր ես, ցաւազին ուրուական,
Աւերներուն պատկերին մէջ ախրական .
Ձիւնը շուշան կը զընէ վարդ վէրքերուդ,
Արին կ'իյնայ խեղճ ծիւերէդ կաս կապուտ :

Դանդաղօրէն կը ժաժես զլուխդ ու կուլաս,
Ու ցած անուշ ձայնով օրօր կը կարգաս,
Օրօր անոնց սր արինին մէջ ինկան,
Օրօր անոնց սր բընացան յաւիտեան . . .

Խաչը ելած, կըրակն ինկած կեանքերուն,
Օրօր կանանչ արեւներուն ու սիրուն
Աչուրներուն որանք մութցան մարեցան,
Օրօր անոնց սր մեծ հովին ցրուեցան :

Հերիք, հերիք . . . այդ օրօրդ ողբ է մահու . . .
Հերիք . . . մենք նո՛ր օրօր ունինք երգելու .
Պիտի երգենք օրօրն յոյսին ու վրէժին,
Ու մեռելներն պիտի հոգին տակ սարսին :

Օրօր, օրօր, վե՛ր առ զլուխդ ու մի՛ լար .
Յաւը սուրբ է, Յաւը՝ մեծ ու փրկարար .
Ոչինչ կայ վեհ բան խաչին տակ զոհն արի .
Գիշերին մէջ կը թաքչի այդ բարի :

Կործանողները, գահիճները մըթին
Փոշիի պէս պիտի անցնին ու ցնդին .
Եւ մոխիրն մէջէն ելլես պիտի դուն,
Արեւներէն նորոգուած ու շողջողուն :

Մի՛ լար, մի՛ թոյլ մազերդ հովուն տարազներ .
Մի՛ լար, մի՛ խեղճ զըլուխքդ վար կործաներ .
Ճանչցի՛ր դուն քեզ . ժողվէ՛ աւինըդ ցիրցան .
Հերիք ուժերդ օտար տան սին կանգնեցան :

Ճանչցիր դուն քեզ . կեանքքդ բու մէջդ է թաքուն,
Գիտցի՛ր յուսալ եւ չարչարուիլ անըրկուն .
Բայց պալարները նախ փրցուր թունաւոր
Որով ուտեր փստեր է միւրդ բուր :

Օրօր տժգոյն եղբայրներուն որ ինկան . . .
Ելի՛ր, օրհնէ՛ մեզ, տարածէ՛ մեր վըրան
Թեւերդ անհուն : Թող մեր արիննն ու հոգին
Քու արեւուդ մատաղ ըլլան ու ցածքին :

Մութին մէջէն պիտի ցցուիս յաղթական .
Աչքերդ ասաղեր պիտի գանձան ու ցոլան .
Վէրքերդ վարդ պիտի ըլլան հասուէտ,
Եւ լոյս պիտի թափի ճերմակ մազերէդ .

Կանգնիս պիտի ճամբաներուն բերանը,
Քանդես պիտի խաւարին սեւ խորանը .
Ոտքի՛ ելիր, ցաւերդ երկունքն են հոկայ .
Ո՛վ մայր, Աշխա՛րհ մը ծոցիդ մէջ կը բնանայ :

Բարիդ, 20 գեկա . 97

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՋԵՐ

4. ՊՈԼՍՈՅ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ըստած է թէ աղաղային լուսազոյն մարդարէն անցեալն է: Աչքերնուս առջեւ պատկերացնելով այդ անցեալը յաճախ սառնամանակները զայն իր բարձր մանրամասնութիւններուն մէջ, առանց կրքի, առանց նախասպաշարումի: Ազգային կեանքերնիս մեռած չէ. ամէն մէկ հայ պիտի շարունակէ ապրիլ ո՛չ միայն իբր անհատ այլ նաեւ, ինչպէս մինչեւ հիմա, իբր անանջատ մաս այն հաւաքական մարմինն որ «հայ ժողովուրդ» անունին տակ կը ստիպողարբու հոյսովներուն: Ազգութեան ճամբան ապահով շարունակելու համար միշտ նայինք հասնիս ուր թողած ենք մեր հանրային իմաստութեան կամ տխմարութեան արձանագրութիւնները կրող յիշատակարաններ, որոնցմէ շարքեր չեն ուզեր եւ յիմարները չեն կրնար օգտուիլ:

Հայ ազգին համար ինքնաքննութեան պարտականութիւնը անխուսափելի է: Հնչակեան կուսակցութիւնը նոյն իսկ իր պաշտօնական թերթին մէջ ձեռնարկեց սառնամանակ սիրելի յեղափոխական նախկին վարչապետներու անցեալ դործունէութիւնը. ազգային շահերուն համար մեր հոգածութեանը պարտականն է այս քննութիւնը: Պահպանողականութիւնը դեռ իր քննադատը չունեցաւ. եւ սակայն ազգին օրինական իշխանութիւնը երկար ատեն պահպանողականները եղան եւ են հիմայ ալ: Նորէն մեղի կը մնայ ուրեմն քննել Կ. Պոլսոյ Պատրիարքարանին վարիչներուն քաղաքագիտական խոհակնութեան սրչափութիւնը, ազգասիրական զգացումներուն սահմանները: Պիտի պարփակուինք տասը տարուան շրջանի մը մէջ, Ներսէս Պատրիարքին մահէն յետոյ թրքասէր վարչութեան մը պաշտօնավարութեան օրէն սկսեալ, 1885ին, կանգ առնելով 1894ին վերջերը, ուր Մատթէոս պատրիարք եւ ժողովրդական վարչութիւն մը ստանձնեցին թիւրքոյ հայերուն սահմանազրական օրինաւոր իշխանութիւնը: Այս քննութիւնը համառոտաբար կ'ընենք իբր պարզ պատմագիր, առանց կուսակցական նկատումներու: Պահպանողականութիւն եւ յեղափոխականութիւն միեւնոյն ազգային կեանքի մը երեւոյթներն են. ոչ մին կրնանք արհամարհել ո՛չ միւսը առանց մեծապէս առւելու:

Ա.
1885 — 1887

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՆՈՒՐԵԱՆ ԷՖԷՆՏԻՒ

Երբ Ներսէս պատրիարք 1884ին վերջերը վախճանեցաւ, հայ ժողովուրդը զրաց թէ ոչ ոք պիտի կրնար ստանձնել շարունակութիւնը այն քաղաքականութեան որուն ամբողջ ծանրութիւնը հանդուցեալ եկեղեցականը ինք կը տանէր: Այս զգացումին հետ մէկտեղ ազգային յոգնութիւնն ալ երեւան եկաւ: Եւրոպական միջամտութեամբ Հայաստանը բարեկարգելու ջանքերը դրեթէ ապարդիւն մնացած էին եւ ապագայ վատթարացումի երկիւղը կը տիրէր: Կ. Պոլսոյ Հայերը սկսան մտածել թէ Դրան հետ հաշտարար քաղաքականութիւն մը Հայաստան

նի համար թերեւ աւելի նպաստաւոր արդիւնքներ արտադրէ բան թէ սնանկացեալ 61րդ յօդուածին վրայ ո՛ր եւ է յուսադրութիւն: Այս խորհուրդը իրագործելու նըպատակաւ Կ. Պոլսոյ Ազգային ժողովը 1885ին Պատրիարք ընտրեց Էդրոսի նախորդ առաջնորդ Տ. Յարութիւն եպիսկոպոսը որ օսմանեան կառավարութեան առջեւ հայկական ինդիքն առթիւ կասկածելի անձնաւորութիւն չէր: Միեւնոյն ատեն քաղաքական ժողովին անպամակցութեան կոչուեցան Դրան վստահելի բանի մը պահպանողական վաճառականներ եւ կառավարական. հայ պաշտօնատարներ: Այս վերջիններուն մէջ էր Նուրեան Յովհաննէս Էֆէնտի, վարչապետութեան համար յատկապէս մատնանիշ եղած:

Նուրեան Էֆէնտիին ընտրութիւնը թրքասէր կուսակցութեան մեծ յաղթանակը եւ մեծագոյն ալ սխալը եղաւ: Նոր քաղաքականութեան յաջողութեանը համար տարրական խոհակնութիւնը կը պահանջէր վարչապետութիւնը յանձնել ազգին գէթ խորապէս ատեղի չեղող անձի մը: Դրան հայ պաշտօնատարներէն ան ատենն ալ ո՛չ մէկը Նուրեան Էֆէնտիին չափ ազգային հակակրօնութեանը առարկան էր: Այդ թուականէն ուժ տարի առաջ Օզսէն խոճատարեան բանի մը տողով հոգեդրած էր Նուրեան Էֆէնտիին Լուծիւնը: «Երէկ, կը գրէր «Նորագիր», Ազգա-«յին ժողովին մէջ Հայաստանի հարստահարութիւններուն «սրտածմելի տեղեկութիւնները երբ կը լսուէին, Նուրեան «Էֆէնտի «Մատիս»ը լայն բացած կը կարգար. գիտաւ «բութիւնը կարգալ չէր, այլ անձնալուծն երեսը կը ծածկէր, «վախալով թէ զուցէ խղճի իայթը երեսան դայ գէմբին «վրայ»: Նորընտիր վարչապետը 1876ին Քաղ. ժողովին անպամակցութեան արտաքսուած էր պաշտօնակիցներուն պարտաւանքի բռնութիւն, վասն զի ժողովին խորհրդակցութիւնները խեղաթիւրելով Դրան հազար բաժ եւ Պատրիարք ու Քաղաքական ժողով օսմանեան պետութեան գէթ իբր գաւազիր ներկայացուցած էր: Հայ ազգը չէր ժողովար նաեւ թէ Չէյթուն թրքական դորանոցի վը կառուցումը նոյն Նուրեան Էֆէնտիին յիշատակը կը մնար: Դեռ «Պալայ»ի չհասած փառամալը, ազգային պաշտօնավարութիւնը պետական փառքի եւստատուի երաշխատրեալ ճամբան համարելով, անկազին կը աննշար Քաղ. ժողովին տտենապետութեանը:

Դրադէ էր այդ մարդը: Գործունէութեան լափող տենդը վարակուած՝ կը մնար առանց ընդարձակ աստարակի. արիւսպետելու յատկութիւններով ծնած՝ ձեռքին տակ չէր գտներ իրեն հնազանդելու պարտաւոր եւ ոչ իսկ փորթաթիւ խումբ մը. բնածին ընդունակութեամբ օժտուած եւ բաւականաչափ ուսում առած՝ կարող չէր Դրան պաշտօնէութեան մէջ գրաւել այն կարեւոր դիրքը որ եթէ անխտիր ամէն իսլամի իրաւունքն է առանց ո՛ր եւ է արժանիքի անհրաժեշտ պարտաւորութեան, ոակայն բրիտտոնէին կը արուի հազուադէպ բացառութեամբ, եւ միայն արտակարգ յատկութիւններու ու անոնց հետեւանք ծառայութիւններու իբր քաղաքագիտական ծանր հարկ մը: Այդ հայը պաշտօնեայ բայ ա ին բողոք գառնութիւններուն մարմնացումը կրնար համարուիլ: Բայց փոխանակ արիւսպետող ցեղին գէթ ատեղութիւն մնուցանելու, զայրոյթը կը թափէր իր ցեղին դիտուն: Իր ցեղն էր որ չէր ուզած իսլամութիւնը ընդունիլ. առանց այդ ազգային կրօնասիրական յամառութեան, հիմա իր առջեւ բաց պիտի գտնէր սատարումութեան պողտան: Փոտոսիրութեանը մէջ խորասակեալ այդ փառասանը աւելի բարեբաղդ չէր եղած

վայելուսի սենչանքներուն մէջ. կը մնար առանց հարստութեան. ամուսնութեամբը արամապրութեանը տակ գրուած գումարը սպառած լինցած էր: Այսպէս ահա ամէն յոյսերուն մէջ յուսախար, ամէն իղձերուն մէջ ճգալիտը, այդ փառամաղ, կեանք ու վայելում՝ սիրող, գործունէութեան մաշեցնող, կարսվալիւր ամբարտաւանը կ'ընփր կը փրփրէր, ինքզինքը կ'ուսեր անհամբեր:

Կ. Պաշտոն Երեսփոխանական ժողովը տարօրինակ աշխատութեան եւ թիկնեամբութեան ազատցողը կուտար՝ բաղաբախան մեծ փոփոխութեան մը միջնորդը այսպիսի վտանգաւոր անձ մը նշանակելով: Կեղբունական վարչութիւնը թէեւ ասանդչորս եկեղեցական եւ ասանդչորս աշխարհական անգամէ կը բողոքանայ, սակայն երբ Նուրեան մը կ'ատենապետէ կամ Մագսուտ մը, այլ եւս ո՛չ մեծամասնութիւն գոյութիւն սենի ո՛չ փոքրամասնութիւն: Վարչապետին բնորոշմանը ամէն պաշտօնակից իր կեանքին, իր անհատական գործերուն մէջ կը վտանգուի: Այսպէս ահա Նուրեան Լիկնտի բնարուելով քաղաքական ժողովին անգամ, կը գտնար վարչութեան պիտը ու անով Պատրիարքին եւ պաշտօնակիցներուն բացարձակ հրամայող արը երկու տարուան համար:

Սահմանադրութիւնը նորընտիր վարչութեան մը պաշտօնավորութեանը միայն երկամեայ սեռութիւն արտօնած ըլլալով, պայմանաւոր լինելու արտօնած վերջնարութեան իրականքի, Նուրեան Լիկնտիին ծրագիրը եղաւ այս կարճ ժամանակամիջոցէն շատ օգտուիլ եւ իր ձեռքուն ընդարձակօրէն գոհացում տալ: Թէ՛ յաջողէր Սահմանադրութեան վերաբնութեամբ աւելի երկարատեւ ժամանակամիջոց մը զեկալարել հայ ժողովուրդը, ա՛յ անկէ ետքը թրքական պատարի ու փառքի առաջնորդը իր առջեւ լայնարձակ բացուած կը մնար. սակայն առայժմ իմաստութիւնը կը կայանար երկու տարուան հասցիներէն անմիջական գտնաւորման մէջ: Նպատակին տիրանալու համար զձեց ծրագիր մը սրուն գործադրութեանը հետամտեցաւ անգույն անպարար, միտ օգտուելով ինքնաբեր պարսպաններէ, յանկարծածին զեկեղբէրէ: Նուրեան Լիկնտիին երկու տարուան վարչութեան պատմութիւնը ուսումնասիրողներուն գտնար չէ մարտիակոմիտէ այդ ծրագրին ամբողջութիւնը. անոր իրաբանչիւր մասը յարած է միտին միտինակ շղթայումով, ու ամենքը մէկտեղ կը ներկայացնեն միաձայն զանգուած մը: Այդ ամբողջութիւնը շարս մասէ կազմուած է.

Ա. Հայ ազգին զեմ Գրան ակներեւ զիտսւրութիւնները զերացնել:

Բ. Ընդհանր երթալ այն թարուն խորհուրդներուն զոր Գուռը կը սածէ եւ սրանց իրականացումին սակայն անմիջական հետապնդումը անխոհեմութիւն կը համարի:

Գ. Հայ ազգը զրչուած ցոյց տալ ի հարկին ստեղծել զրչուսի շարհաթիթներ կամ նպատուել անոնց աճուսին. յետոյ, զսպելով զրչուսիները, ստեղծել հանդարտութիւն մը առանց ազգին համար ո՛ր եւ է շնչին փոխարինութեան, մանաւանդ թէ իրաւունքներու զոհողութեամբ. եւ այսպէս պետութեան նշանաւոր ծառայութիւն մատուցած ըլլալու արժանիքին տիրոջսանալ:

Դ. Ներկայացուած առիթներէն օգտուիլ զրամական կացութեանը բարսրութիւն համար:

Նպատակս Նուրեան Լիկնտիին երկամեայ վարչութեան մանրամասն պատմութիւնը գրել չէ. ուստի կը բաւականանամ ներկայացնելով այդ պաշտօնավարութեան

մի բանի զլիաւոր զծերը սրունը կրնան ամբողջութիւնը իրենց մէջ պատկերացնել:

* * *

Նուրեան Լիկնտի երբ պաշտօնին զրուիւր անցաւ տնայարեց ստիպել Յարութիւն պատրիարքը օսմանեան վարչական գրութեան համար զոհունակութիւն հետադրել Եւրոպա հայ ազգին կողմէն. պատրիարքական այս յայտարարութեան հետեւանքը եղաւ Հայ ազգին եւ Գրան յարսբութիւններուն աւելի լարումը:

Օսմանեան կառավարութեան հետ հաշտ քաղաքականութեան հետեւելու գաղափարը թէեւ ծնունդ առած, սակայն զեւ «ազգային քաղաքականութիւն» կոչուելու չափ չէր յառաջացած. անշահախնդիր խելացի պահպանողական մը պիտի ընթանար զգուշ վարմունքներով, չը վտանգելու համար հոգեբանական կացութիւն մը սրմտողութիւն հնարաւոր էր Հայ ազգին եւ Գրան յարսբութիւնները բարսրել փափարոյներուն: Հայ ազգին իրաւացի պահանջումներուն գոնէ մասամբ զոհունակութիւն պատճառող կարչ մը առաւելութիւններու տիրանալէ յետոյ միայն կարելի էր վիայական սալ օսմանեան իշխանութեան ձեռքը: Այս պայմանը իրազորուած չըլլալով, պատրիարքական հետադրելու նախ ազգութիւն յետոյ զայրոյթ առաջ բերաւ, ազգային անհուն ազգուսութեան մը ակներեւ արայայտութեամբ թէ՛ Հայաստան, թէ՛ Պալեստինա եւ թէ Եւրոպա: Այս առիթը թրքական վարչութիւնը ամենախիտա բնագառութիւններու կնիթարկուեցաւ երոպական մամուլին մէջ: Տեսնելով այս զրչուսի Գուռը աւելի կատուեցաւ հայ ազգին զեմ: Թրքական զայրոյթը ստատիկ էր մանաւանդ այն պատճառաւ որ կառավարական շրջանակներու կողմէն զոհունակութեան հետադրի մը պահանջումը չէր ներկայացուած Պատրիարքարանի: Ստորագամ Սախա փաշա յայտարարեց թէ «ինչ խայտատակութիւն է առ. հայերը իրենք կ'ըն սր եկան թոյլատուութիւն ինդրեցին հետադրով Եւրոպա զոհունակութիւն յայտնելու օսմանեան կառավարութեան համար: «Մենք ի հարկէ արղելքի պատճառ մը չունէինք. ու հիմա «այդ հետադրին զեմ բողոքողները միեւնոյն հայերն են:» Սախա փաշա իբր թիւրք եւ պաշտօնեայ, միեւնոյն կը հասարկը թիւրքից հայերն ալ, Եւրոպայի հայերն ալ, Հայոց պատրիարքն ալ, իրենց ընարած Նուրեան Լիկնտին ալ:

Այսպէս ահա Նուրեան Լիկնտիին առաջին գործը եթէ հաճելի չեղաւ հայ ազգին, հաճելի չեղաւ նաեւ թիւրք կառավարութեան սր ամէն բանէ առաջ լուսութեան փափարդ է, եւ ազմուկի թշնամի:

* * *

Պատրիարքական ընարութեան ազգային իրաւունքին սեղմումը, հանդիտաւոր ժողովներու գոյութեան անհետացումը, սահմանադրական գրութեան ջնջումը կը յօրինէին Նուրեան Լիկնտիին ծրագրին զլիաւոր մասերը: Ուր սր կրնար առանց վարանելու կը յայտարարել թէ «այս միտ «պետական երկրին թէ խալաթներուն եւ թէ միտ բրիտանական հասարակութիւններուն հաւատարմակն զայթակողութիւն է տեսնել» բացառիկ առանձնաշնորհուսներ «վայելող եւ տարին տասերկու ամիս հարկը քառասուն անգամով նոյն իսկ մայրաքաղաքը ժողովներ գումարելու

« իրաւունք ունեցող միակ հպատակ ժողովուրդ մը : Բնա-
 « բաղական գրութիւնը այնքան անհաճոյ է Նորին Վեհա-
 « փառութեան որ հանրային պարտքի վարչութեան մէջ իսկ
 « չլծողատրեց ընտրութեամբ օսմանեան պատուիրակի
 « մը ներկայութիւնը : Եւ յետոյ Յայնքը որոնք շատ աւել-
 « լի իրաւունք պետք է վայելեն, չեն կարող ունենալ իրենց
 « պատրիարքը առանց նախապէս ընտրելիներու ցուցակին
 « Գինէն սրբազրութեանը, մինչ հայերուն ընտրածը ընա-
 « րուած է : » Եւ ահա Նուրեան Էֆէնտի հետամտեցաւ
 Սահմանադրութեան ջնջումին : Թարսն իղձ Դրան որ
 սակայն վարսնոտ կը մնար անյաջողութեան կասկածին
 առջեւ : Վարչապետը ինք փութաց ընդառաջել այս փա-
 փաթին սրան իրականացումը իր ծառայութիւններուն
 պատուականազոյնը պիտի համարուէր . մէջ ապաքէն Սուլ-
 թան Համիտ ըսած էր . « Այն փաշային էն յիւրապիսի
 գործը եղած է այդ Սահմանադրութիւնը : »

Սահմանադրութեան ջնջումին յաջողութեան յատու-
 կադիւր կը կայանար ժողովներու կանոնաւոր գումարումը
 ինքնին անհնարաւորութեան մասնելու մէջ : Մեծնոց,
 հրատարող, մշանչեանապետ բացակայ ժողովականներու
 յաջորդներ ընտրելու թոյլատուութիւնը Պատրիարքարանը
 կը զլանար ընտրողական ժողովին . պաշտօնի վրայ զբա-
 նուող երեսփոխաններն մաս մըն սլ բացակայութեան
 հրաւեր, կամ ստիպում, կը ստանային : « Այսպէս ահա,
 « կ'ըսէր Նուրեան Էֆէնտի՝ աջ ձեռքին հինգ մատերը ար-
 « համարհական թօթափումով շարեկող, այսպէս ահա
 « ինքնիրենը պիտի թափի լինայ այդ երեսփոխանական
 « ժողովը . առանց ազմակի, առանց շշուէի, որ մը հիւժ-
 « ախտէ մեռած պիտի գտնէր զայն, ու իրեն հետ ալ Սահ-
 « մանադրութիւնը ջնջուած : » Բայց Արգային ժողովը ու-
 նէր ներքին կանոնադիր մը, Ռուսիանեանէն յօրինուած, որ
 տարիներու անընդհատ գործադրութեամբ սպահոված էր
 ժողովին օրինաւոր գումարութեանը . Նուրեան Էֆէնտի
 սխալ նախ այդ կանոնադիրն զէմ գտել :

Երիտասարդ երեսփոխաններէն մաս մը անհնելով այս
 վտանգը բարեկեցան շուրջը անձնաւորութեան մը որ իր
 բազմադիմի տաղանդովը, պատուածանաչութեամբը ու
 ազգասիրութեամբը բացառիկ յարգանք կը վայելէր ազգին
 մէջ : Սոյդ անձը հայրենասիրական սովորական մահար-
 գակէն վեր կը բարձրանար իր յանգնութեամբը որուն
 գաղանիքը յետոյ երեւան պիտի գար . Տըթ . Թիրեարեանն
 էր : Պատիկ խումբը հաւաքուեցաւ իր պետին բոլորը, ու
 անոր առաջնորդութեամբը ջանաց փրկել Սահմանադրու-
 թիւնը : Այդ խումբը զիտէր թէ կը պահի իրեն ազգային
 մեծ ուժ մը որուն կ'օթնած կարգապահայ զիմազրել պետա-
 կան հարուածի մը . կը զգար թէ վարչապետը կրնար մե-
 քենայութիւններով հասնիլ իր նպատակին, հետեւաբար
 ուզեց ժամանակ շահիլ խոհական, վարպետ եւ համբերող
 ուզողութեամբ . Նուրեան Էֆէնտիի խաղերուն զէմ ինքն ալ
 խաղեր խաղաց, այնպէս որ բոլորեցաւ 1895 ի վարչու-
 թեան երկամեայ շրջանը, առանց Սահմանադրութեան
 վերաբնութեան խնդիրը պաշտօնապէս յուզուած ըլլալու :
 Խաղի եկած էր Նուրեան Էֆէնտի . ու օր մը մտնեցնոտ,
 կատաղի, հարկադրուեցաւ անխոռ ազգին յանձնել այն
 Սահմանադրութիւնը որուն փրատակներուն վրայ իր փառ-
 քի եւ պատուի պաշտար բարձրացնել երազած էր :

Այսպէս ահա այդ մեղապարտ խորհուրդն ալ, եւ ա-
 նոր յաջողութիւնը ապահովելու յատակազիծը, ուրիշ հե-
 տեւանք չունեցաւ բայց եթէ աւելի եւս զօրացնել սահմա-
 դրասիրական զգացումը, ու երեսփոխանական ժողովը

միշտ բազմութիւ եւ ամբողջակի պահելու հարկը զգացնել
 ամենուն :



Հայ ժողովրդին համար, ինչպէս յայտնի է, թեմական
 առաջնորդութիւնները կենսական կարեւորութիւն ունին .
 առաջնորդական երեք պաշտօնաբաշխութիւն կը բաւեն
 զագափար մը ստշու Նուրեան Էֆէնտիին ձգտութեան
 վրայ :

Վարչապետին յանձնարարութեամբն ու պաշտօնապետ-
 թեամբը Էրզրումի առաջնորդ ընտրուեցաւ Գերձակեան
 Արիտապիտ եպիսկոպոսը, Վանի թեմը յանձնուեցաւ Պո-
 զոս եպիսկոպոսին ու Խարբերդը Պետրոս վարչապետին,
 երեքն ալ իրենց անցեալովը տխուր համբաւ վայելող :

Նուրեան Էֆէնտիի իբր Դրան պաշտօնեայ ե Պատրի-
 արքարանին ալ վարչապետ մեծ թեմերու առաջնորդա-
 կան խնդրին մէջ զբաշտար ընթացքի մը հետեւելուն
 հարկը կ'ըմբռնենք . սակայն նոյն կրկնակի պաշտօնը ու-
 նեցող խելացի եւ ազնուամիտ պետ մը պիտի ջանար ս-
 առաջնորդութեան կոչել եկեղեցականներ որոնք կառավա-
 րական տահաւութեան առարկայ գարձած չըլլալով հանդերձ,
 միանգամայն զգուշի չըլլային հայ ժողովրդին : Առանց
 նկատագրութեան առնելու այդ ճարպիկ կաշառատու եկե-
 ղեցականներէն Նուրեան Էֆէնտիի պէս գրասեական տաշ-
 նապէ տառապող անձի մը ակնկալութիւնները, լսի բա-
 զարական անասիւններու կողմէ այդ անուամբները կը
 համապատասխանէին վարչապետին ծրագրին : Հայաստա-
 նի հայ ժողովրդին երկպառակութեան անընդհատ շարու-
 նակութիւնը Նուրեան Էֆէնտիին բազարակառութեանը
 ամուր մէկ յենարանն էր . եւ ուրիշ ոչ սը կրնար հաւատա-
 րիչ այդ երեք առաջնորդներուն վարպետութեանը եւ ան-
 խիղճ վատութեանը : Ասոնք պիտի հայթայթէին բազմա-
 թիւ կնճոտս խնդիրներ զորս վարչապետը հարձեղու առի-
 թը եւ պարձանքը պիտի ունենար :



Կարկուտեան գատին խնդիրը տարօրինակ ցոյցացումով
 գորս կը ցտարեցնէ Նուրեան Էֆէնտիի հոգիին մէջին կող-
 մերը :

Սուրիացի փաստաբան Կարկուտ երկարատեւ գտառ-
 վարութեանէ յետոյ Երբի վճռով տիրեց Երուսաղէմի մէջ
 Ս . Յակովբեանց վանքին պատկանող 30,000 ոսկիի տը-
 ժողութեամբ հողի մը : Պատրիարքարանը յաջողեցաւ այդ
 վճիռը կայտերական հրամանով ջնջել առաջ : Այդ գատին
 ելլէն ամբողջ հայ եկեղեցականութեան եւ հայ ազգին
 վիրաւորանքը ըմբռնելով՝ Սուլթանը բազարապետական
 խելացի գործ մը հասարեց նոյն իսկ Երբի վճռին բեկա-
 նումը : Հայոց վանքը իր այս յաջողութիւնը կը պարտէր
 զլիաւորասպէս երկու անձնաւորութեան . գտառական գոր-
 ծերու նախարարութեան խորհրդական Վահան Էֆէնտիի,
 եւ գտառական բարձրաստիճան պաշտօնատար Շահպաղ
 Կարապետ Էֆէնտիի՝ մտերիմ բարեկամ գտառական նա-
 խարար Ճէլթուկ փաշայի : Այս բեկանումին օրինական եւ
 բեղոյթ ընծայելու ձեւակերպութիւնները պետական խոր-
 հուրը պիտի կատարէր : Եւ ահա Նուրեան Էֆէնտի չորս
 հարիւր ոսկի կը սպահանջէ իբր գաղանի կաշառք Սահմա-
 ճէլթուկտոսին փաշայի, նախապահ պետական խորհրդին
 օրենսդրական ճիւղին սրուն կ'անգամակցէր Նուրեան Էֆ . :

Շահագրգռեց Էֆէնտի անդեկանալով այս պահանջումին պայ-
 րագին կը բողոքէ Սատրապամ Քեամիլ փաշային սրմէ
 խստաւ կը յանդիմանուի Նուրեան Էֆէնտի: Ասիկէ իր ահ-
 ունի սխը ընդդէմ Շահագրգռի, որուն ամուսնական չնչին
 մէկ խնդրէն օգտուելով յաջողեցաւ անիրաւարար վայն
 բանապրել առջ, օժանդակութեամբ պատրիարքին ու կրօ-
 նական ժողովին ուղորակութեամբ: Երբ խօսինք 1890 ի
 վէպքերուն վրայ պիտի տեսնենք այս շահագրգռական
 բանապրանքին անուղղակի հետեւանքները:

* * *

Պէշիկթաշի գերեզմանատան խնդիր մը ծագեցաւ
 1887 ի սկիզբները: Երբ Երզնկայի պարսկէն ու բլօշիք հե-
 ղհեաւ աւելի կարեւորութիւն ստացած ըլլալով, 1865էն
 ի վեր ո՛ր եւ է թաղում արգիլուած էր արքայական զբօսա-
 վայրին մերձակայ հողերուն վրայ: Հիմայ Երբ Երզնկայի
 զբօսատեղի մը այլ Սուլթանին մշտնջենական բնակարանն
 էր թէեւ, սակայն սասը սարուան մէջ Սուլթանը ընաւ
 չէր յիշած այդ մտայնուած հին մեծաւասանը, երբ մէկէն
 ի մէկ 1887 ին անոր գրաւումին շուկը սկսաւ սարա-
 ծուլ: Սուլթանին ինքնածին գազափաճն էր այդ խոր-
 հուրը. ոչ ոք որոշ բան մը ըսելու կարող էր: Այդ յան-
 կարծական պահանջումը երեւան կուգար Նուրեան Էֆէ-
 աիին օրովը ուստի եւ մեծկակ խաղի սը կասկածը արթն-
 ցաւ մարքերու մէջ: Պէշիկթաշի անպէտ գերեզմանատան
 գրաւումով շիրմներու անբոնաբարելութեան կրօնական
 սկզբունքը անգամ մը ջնջելէ յետոյ անիկ ետքը Բերայի
 գերեզմանատան յափշտակութիւնը հնարաւոր ընծայելու
 համար Նուրեան Էֆէնտիի եւ Մասէյն Միշիբի Ղազի
 Օսման փաշայի միջեւ հասաձայնութեան մը գոյութիւնը
 կասկածուեցաւ: Այդ Բերայի գերեզմանատանն ալ
 1865 էն ի վեր կը մնար լքեալ: Խրիմեանի Պատրիարքու-
 թեանը արաքին գործերու նախարար Խալիլ Երիֆ փա-
 շա թէեւ մտաբերեց պետական կարուածի վերածել հա-
 հիւ հազար ոսկիներով արժէք ունեցող այդ լայնածաւալ
 հողը, սակայն ժողովրդային յուզումը պարտաւորեց նա-
 խարարը հրաժարել բազմանքէն: Ձինուորական իշխա-
 նութեան աչքերը միշտ յառած կը մնային զօրանոցներէ
 շրջապատուած, ուղղական գերազանցօրէն կարեւոր հողի
 մը վրայ որուն վէմը կը տարածուի Արևեան գաշարը:

Բերայի գերեզմանատան գրաւումէն Նուրեան Էֆէնտի
 կը յուսար բազմաթիւ շահեր որոնց մէջ պզտիկ տեղ մը
 չէր վիճակուած իբր փոխարինութիւն Բերայի եկեղեցիին
 կարեւոր գումարի մը «պարգև»ին յոյսին. միտպետ խնա-
 մակալ Բերայի թաղին, Նուրեան Էֆէնտի իր անկախ արա-
 մագրութեան տակ պիտի ունենար այդ գումարին գործա-
 ծութիւնը: Իսկ Ղազի Օսման փաշային ջերմագին բար-
 եացակամութեան շնորհները ակնկալելու ամէն իրաւունք
 պիտի վայելէր տակաւին «Մէճիտիէ»ի բարձրագոյն կար-
 վերէն զուրկ պաշտօնեան:

Եթէ արդարեւ Սուլթանը «փափագ» յոյսնած էր
 պարտէզի վերածուած տեսնել իր բնակարանին մտ բայց
 աչքէն հեռու մեծաւասանը, այդ օրինակ փափագ մը
 պարզապէս «հրաման»ի քաղաքավարական համանիշը
 կրնար համարուիլ. ու անքաղաքադիտութեան վերջին
 խօսքն էր օսմանեան կայսութեան միահեծան պետին,
 իսլամութեան խալիֆային հրամանը «բայան»ներու ժո-
 ղովքի մը հրապարակային վիճաբանութեանն ու որոշու-
 մին վտանգներուն ենթարկել: Այսպիսի գտուար պարա-

գայի սը խելացի եւ ճշարտապէս ազգասը վարչապետ
 մը, որ թէեւ կառավարական պաշտօնեայ բայց իր կառա-
 վարութեանն ալ անշահահինդիր ծառայող պարկեշտ պաշ-
 տօնեայ մը ըլլար, ինչիւրը պիտի լուծէր անձայն անշուկ,
 պատրիարքական ու կաթողիկոսական շրջանակներուն
 մէջ: Եթէ Սուլթանին փափագին մերժողական պատառ-
 խան մը եկեղեցիին վերջնական պահանջումն էր, այդ
 ծանր պարտականութիւնը միայն պատրիարքը կրնար
 կատարել, «աղաչելով» Սուլթանը չվիրաւորել «պար-
 դամիս» ժողովրդին բարեպաշտական զգացումները. Սուլ-
 թան Համիտ բաւական նրբամիտ էր ըմբռնելու համար
 «աղաչանք»ին ներքին նշանակութիւնը: Իսկ եթէ ազգա-
 յին շահերը կը պարտաւորէին Պատրիարքարանը տեղի
 առաւ, ինչիւրը պէտք էր լուծել կաթողիկոսական բայցա-
 ուիկ անօրինութեամբ: Լոկի կարգապահութիւն մը սակայն
 չէր կրնար նպաստել Նուրեան Էֆէնտիին շահերուն, ո-
 ռոնց իրակատար յաջողութեան պայանը ազգային «ա-
 հեղ ընդդիմադրութեան մը» ջախջախումին կասակերպու-
 թեան մէջ կը փնտուէր: Շահահնդրական այս անձուկ
 առջով վարեց Նուրեան Էֆէնտի Պէշիկթաշի գերեզմանա-
 տան հարցը: «Ահեղ ընդդիմադրութիւն մը» ջախջախած
 ըլլալու պատիւը վայելելու հաւար հարկ էր նախ այդ
 ընդդիմադրութիւնը ստեղծել:

Նուրեան Էֆէնտիին ասքոջ ռազմայարգրութիւնը
 կայացաւ ժողովը շուարեցնելու, զրգոնելու մէջ: Կրօնական
 ու քաղաքական կրկնակի հանգստանքով այսքան կարեւոր
 խնդիր սը Ազգային ժողովին վերաքննութեանը կ'ենթար-
 կուէր առանց վարչութեան կրօնական ու քաղաքական
 ժողովներուն համաձայն մէկ անգեկապրին, սրմէ երեսփո-
 խանական աւրովը կարենար առաջնորդուիլ: Անգամ մը
 որ փոխանակ Էջմիածին զիմելու վարչութիւնը Պոլսոյ
 Ազգային ժողովին վճռին կ'ենթարկէր գերեզմանատան մը
 կրօնական հարցը, տարրական խոհեմութիւնը կը պահան-
 չէր գտնէ նախապատուութիւն տալ քաղաքական նկա-
 տումներու ժողովը ընդհակառակը եկեղեցական Համա-
 գումարի մը կերպարանքը առաւ: Տ. Խրիմեան յայտարար-
 րեց թէ ինք պիտի չի թոյլատրէ գերեզմանատանը յանձ-
 նելու համար մինչեւ իսկ կաթողիկոսական հրամանի մը
 գործադրութիւնը: — Կաթողիկոսը ես եմ, գուշեց:

Ու Ղեւոնդեանց աստիճանութիւնը, այդ փեարուարի 7
 երեքշաբթի օրն իսկ, սրաերը յուզող պերճախօս աստեւա-
 բանութեան մը առիթ ընծայեց ազգայն կաթողիկոսին
 որ շատ չանցած զուտ պիտի կանգնէր գերեզմանոցը
 յանձնել փափաքող եպիսկոպոսական խմբակին. բայց այդ
 պահուն Աւարայրի յիշատակները հրաբուրբը կը խանգա-
 վառէին ան օրուան տաքուկ արեւին մէջ Պատրիարքա-
 րանին մեծ սրահը զինուորեալ երեսփոխաններուն սրտերը:
 Ու կը հրճուէր Նուրեան Էֆէնտի այս բորբոքումէն, բայց
 երբ ա՛լ կարծեց թէ ընդդիմադրութիւնը իր ուզած աստի-
 ճանին հասած է՝ մէջ տեղ նետուեցաւ ահաբեկիչ սարսու-
 ռով մը հակառակորդները անձնատուութեան հարկազ-
 րելու:

— Եթէ գերեզմանատանը չի տաք ազգին զուլիւր կը-
 րակ պիտի թափի, կրակ, գոռաց:

Չարագուշակ մարգարէութիւն որ անհասկնալի կը
 մնար, զի կը թոշէր շահամուտութեան կասկածու բերնէն.
 եւ սակայն 1895 ի հրդեհին մէջ չփնտառէր 1887 ի
 կայծը, անձնասիրութեանը մէջ վիրաւորուած սուլթանի
 մը ասելութեան լուցիկին:

Այս սպանուիլը ա՛լ բոլորովին խելացեղեց մաս մը

հրեօփոխաններ որոնք զայրոյթէ մղուած պոռագին թէ
— Ուրեմն ամէն ատեն կարելի՞ պիտի ըլլայ կրակի սպառ-
նալիքով պահանջի ազգային խղճին զոհողութիւնը :

Զուր տեղը Նուրեան էֆէնտիի հանգարտաբարոյ
պաշտօնակիցները կ'աշխատէին մեզմացնել բոբոբուսը,
եւ ժողովին առաջնորդել խելքը գլուխը խորհելու :

Այդ օրը նշանաւոր էր Ասլանեան Ներսէս վարդա-
պետին ընդդիմադրութիւնը ֆաղաքական ժողովին առա-
ջարկութեանը : Սուլթանին անձնական գանձին նախարար
Յակօբ փաշայի հետ այդ վարդապետին մտերմական յա-
րաբերութիւնները ծանօթ ըլլալով, ենթացողութեամբ թէ
Յակօբ փաշան իբր հեռատես եւ անշահախնդիր անձնաւո-
րութիւն պիտի կարենար ազգել իր բարեկամ եկեղեցա-
կանին վրայ ընդունել ապու համար գերեզմանը յանձնե-
լու առաջարկը, եթէ իրօք սուլթանին փափաքն էր ալ .
վարդապետին ընդդիմութիւնը վերադրութեամբ անոր ստոյգ
տեղեկութիւններուն թէ սուլթանը կարեւորութիւն չընծա-
յիր այդ գերեզմանատան : Ժամանակ անցնելէ յետոյ պի-
տի յայտնուէր թէ Նուրեան էֆէնտի ինք ինչորոք էր
Ներսէս վարդապետէն դիմադրել ֆաղ. ժողովին առաջար-
կին : Միշտ դիմադրութիւն մը ստեղծելով անոր յաղթած
ըլլալու խաբեբարութիւնը : Ժողովականները, այս նրբու-
թիւններուն անգիտակ, լրջաբար հաւատացին վարդապե-
տին խօսքերուն :

Ու հիմա, տասնեակ տարիներէ վերջ, կրնանք զգալ
թէ այդ մերժումը որպիսի գառնութեամբ պէտք է համա-
կած ըլլայ սուլթանին սիրտը . խալիֆը այդ օրը թերեւ
ամէն ատենէ աւելի զգաց իսլամական դօրութեան ակա-
րացումը : Իր նախահայրերը իրենց հրամանին ներքեւ
ունէին գերեզմանատուններն ալ, եկեղեցիներն ալ, քրիս-
տոնեայ ժողովուրդներն ալ . ամէնքն ալ իրենց կեանքը,
իրենց զոյութիւնը սուլթանին շրթերէն կախուած կը տես-
նէին . ու հիմա ինք Յաթիհի յաջորդը եւ ոչ իսկ կրնար
տի մը հող, ան ալ անպէտ ամենուն, քաղաքավարու-
թեամբ իւրացնել : Ու ամիսներէ ետքը երբ Տ. Խրիմեան
իր շուրջը բոլորելով եպիսկոպոսական դասը կը վաւերա-
ցնէր Պէշիկթաշի գերեզմանատունը սուլթանին սրամա-
զրութեան տակ գնելու կաթողիկոսական հրամանագիրը,
եւ Պատրիարքն ալ զայն կը տանէր Եւրլազի պալատը,
Օսման փաշա արհամարհանքով Պատրիարքին երեսին կը
նետէր կաթողիկոսական հրամանագիրն ալ, Խրիմեանի
վաւերացումն ալ : Այդպէս հայ աշխարհը գերեզմանատան
վերածելու խորհուրդը չէր յղացուած արդէն :

* *

Երբ սահմանադրական երկու տարուան շրջանը լրա-
ցու, Նուրեան էֆէնտի պաշտօնէն քաշուելու անխուսափելի
հարկին մէջ կը գտնուէր : Անգամակիցները իրմէն Եւրլազի
պալատը ուղղակի մասնանիչ եղած, մանաւանդ գերեզ-
մանատան խնդրին առթիւ, կ'ըղձային շուտ անջատուիլ
իրենց վտանգաւոր պետէն . ազգային հակակրօնութիւնը
ժայթագոյն աստիճանին հասած, հնարաւորութիւն չի կար
վարչապետութեան ապօրէն շարունակութեանը :

Օսմանեան կառավարութեան հետ յարաբերութիւն-
ներու ւստին ազգին միտումները ինչ վիճակի մէջ գտած
էր երկու տարի առաջ, եւ ինչ վիճակի մէջ թողուլ կը
մեկնէր Պատրիարքարանէն թրքասէր կուսակցութեան
պետը : Այդ կարճ ժամանակամիջոցը բաւական եղած էր
այդ ակտոր անձնաւորութեան մեծապէս վտանգելու Ներ-

սէս Պատրիարքին մահէն յետոյ երեւան եկող հաշտաբար
քաղաքականութեան զաղափարը : Սուլթանը անձնապէս
զանազան Հայոց գէմ, կառավարական շրջանակները
կատարի, Եւրոպայի հոյիքը գրգռել, Հայաստանի մար-
տիրոսութիւնը ահեղ, ու ամբողջ Թիւրքիոյ Հայերը յու-
սահաա մոլեգնութեան մէջ . եւ Յեղափոխութիւնը իբր
փրկութեան յուսատու կը ներկայանար մաքերու : Այն օրը
որ է. Պոլսոյ Ազգային ժողովին թրքասէր կուսակցու-
թիւնը եօթնի գէմ յիսուն եւ չորս բուկով վարչապետու-
թիւնը կը յանձնէր Նուրեան էֆէնտիի, անշուշտ մաքէն
չէր կրնար անցընել թէ անոր պաշտօնավարութիւնը իր
փափաքներուն եւ մտազրութեանը բոլորովին հակառակ
արդիւնք առաջ պիտի բերէր, անհուն շարիքներու ընկե-
րակցութեամբ եւ վատթարագոյն ապագայի մը հաւանա-
կանութեամբ :

Կուսակցութիւն մը յետադիմական ըլլայ թէ ազատա-
կան մեղի միշտ ազետաբեր է երբ իր վարիչները խղճա-
միտ անձնաւորութիւններ չեն : Ո՛չ պահպանողականու-
թեան վերադրենք մեր կորուստները ոչ յեղափոխութեան,
այլ պարզապէս անոնց առաջնորդներուն անպարկեշտու-
թեանը :

Նուրեանը՝ Ժընէվ Նազարեկեան մը պիտի ըլլար .
Նազարեկեան՝ Պոլիս Նուրեան մը :

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՐԻԻՆՈՏ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Աս Սուլթան Համիտ Երկրորդ

«Տուք զկայսերն կայսեր :»

ՄԱՏԹ. ԻԲ. 21

Ա.

1896 օգոստոս 14 չորեքշաբթի օրը, կէս օրին մօտ
ազգականի մը հետ կը ճաշէի կալաթայի քարափնիկուն
վրայ դանուած գարեջրատան մը մէջ, սպասելով Մէնա-
ժըռի Թառիթի մի «Ժիոնտ» շողենուին, որ նոյն օրը
պիտի հասնէր, երբ բարեկամ մը ներս մտնելով ըստ .

— Գիտէ՞ք, այսօր Դրօշակեանները ցոյց պիտի ընեն :

Օրերէ ի վեր լսած էինք այս ցոյցին գրոյցը : Նոյնիսկ
բերնէ բերան կը պատմուէր թէ ուսմբեր պիտի գոր-
ծածուէին, թէ արտոտահմանէն յատկապէս գործիչներ ե-
կած էին եւ թէ մեծամեծ պատրաստութիւններ կը տես-
նուէին : Ընդհանրապէս անանկ կը կարծուէր թէ ցոյցը
Ստամբուլի կողմը տեղի պիտի ունենար :

Ես որ նոյն օրն իսկ շողենաւ պիտի մտնէի հետեւեալ
օրը մեկնելու համար Պոլսէն եւ անհամբեր կը սպասէի
«Ժիոնտ»ի հասնելուն, գրեթէ անտարբերութեամբ լսեցի
բարեկամիս տուած լուրը եւ նոյնիսկ շատ հաւատք չըն-
ծայեցի ըսածին : Դրօշակեանները սկիզբէն ի վեր շատ
վստահութիւն եւ համակրանք չէին ներշնչած ինձի եւ
ա՛յնպէս կ'ենթադրէի որ իրենց կողմէ տեղի ունենայիք
յեղափոխական փորձերը միշտ անյաջողութեան եւ վիժու-
մի գատապարտուելու հաւանականութիւնը ունին :

Նոյն միջոցին սեւ մծրուքով, երկայնահասակ եւ զըլ-
խարհի կրող մարդ մը շուտաբայջ անցաւ դարեջրատան
առջևէն: Յայցին յարը մեզի բերող բարեկամը անմիջա-
պէս տեղէն ցատքեց եւ՝

— Ահա՛ Դրօշակեան պետ էր, դոչեց, երթամ եւ
իրմէ ազէկ մը հասկնամ դործը: Բարեկաւս է եւ ինձ բան
մը չի ծածկեր:

Վայրկեան մը կարը վերադարձաւ:

— Ճիշտ է, այսօր պիտի բլլաւ եղեր, բաւ,
հաստատ ու խորհրդաւոր կերպով մը, աչքերը շար կոպժ
ժուռ ամեկէ կարը:

Հակառակ թերահաւատութեանս, սկսայ կասկածել
թէ իրա՛ւ էր բերած շարը եւ գաղտնի հրճուանք մը զգացի
խորհելով որ Պոլիսը ձգելէ առաջ ներկայ պիտի գտնուէի
խառնաշփոթութեան մը, ֆրանսական շողենաւի մը մէջէն:

— Որովհետեւ կը յուսայի որ գեւ ցոյցը չեղած «ժի-
սօնա»ը պիտի հասնէր եւ ես մէջը պիտի ստնէի, յաջորդ
որը ճամբայ կլլելու համար:

Անցազիր չունէի եւ ասոր համար որոշած էի մեկնու-
մէն օր մը առաջ շողենաւ մտնել, այն վտահալութեամբ
թէ շողենաւին շարջը հսկողութիւնը նուազ խիստ պի-
տի բլլար:

Մեր բարեկամը մեկնեցաւ ուղղութիւն մաղթելով ինձի:

Կէսօրէն կարը ազգականնի հետ կյանք դարեջրատու-
նէն՝ պտոյտ մը բնելու համար բարափին վրայ, սոյաւելով
«ժիսօնա»ին որ կ'ուշանար գալու:

Հազիւ թէ կամըջին մօտեցած էինք, երբ՝ յանկարծ
տեսանք որ բարափին վրայ գտնուած շէնքերէն մարդիկ
շուտաբա՛ժ՝ ահարկեա՛ծ՝ բարափին վրայ կը խուժէին, ոմանք
նոյնիսկ ցատքելով պատուհաններէն ու փայտորձերուն
վրայէն: Մէկէն ի մէկ չկրցանք բմբռնել թի ի՛նչ կ'անց-
նէր, բայց բնազդաբար գեպի ծովկարը շտապեցինք եւ
նուազի մը մէջ նետուելով՝ ըսինք նուազարին որ ցամա-
քէն հեռանայ: Նուազարը որ յոյն ծերուկ մըն էր, ան-
միջապէս սկսաւ թիալարել: Բազմութիւնը կը շարունա-
կէր տեղալ բարափին վրայ: Տեսնելով որ ստախան մը
կանգնած էր ծովկարը՝ դոչեցինք:

— Ի՛նչ կայ, ի՛նչ կ'ըլլանք կոր:

— Երկրաշարժ պատահեցաւ, պատասխանեց ստա-
խանը, ամենայն պաղարկեւութեամբ:

Հասկցանք որ մենէ աւելի բան մը չէր դիտեր, կամ
չէր ուզեր բացատրութիւն մը տալ:

Նոյն միջոցին բարափին վրայ խոնուած ամբողջ կը
վազէր նուակներու մէջ, ուր կը ջանար ապաստանիլ եւ
ծովին բացը կլլել: Ճշմարիտը խոստովանելու համար,
վախ չէի զգար: Մեծ յուզմունքի մը ներկայ կը գտնուէի
որ անախարժ չէր ինձի եւ անընդհատ սիկարէթ կը ծխէի:
Նուազարնիս վախկոտ մէկն էր:

— Աստուած իմ, ի՛նչ կ'ըլլանք կոր, կը դոչէր մերթ
ընդ մերթ, մինչդեռ ես կը խնդայի՝ «Բան չի կայ» ըսելով:

Այսուհանդերձ կ'ուզէինք զիսնալ թէ իբրք ի՛նչ կ'անց-
նի կը գտնայ: Ի զուր մեր շուրջը խոնուած նուակներուն
մէջ գտնուող անձերուն հարցումներ կ'ուզէինք:

— Ամենքը կը փախչէին կոր, ես ալ փախայ, կը պա-
տասխանէր մէկը:

— Կոխ կ'ընեն կոր, կ'ըսէր ուրիշ մը:

— Իրար կը զարնեն կոր, կը դոչէր երրորդ մը:

Նոյն միջոցին հրազէնի ձայներ կը հասնէին մինչեւ
մեզի: Յանկարծ թնգանօթի պայթումին պէս ահեղ ձայն
մը լսուեցաւ, յետոյ ուրիշ մը, յետոյ երրորդ մը: Ծովին
վրայ, նուակներուն մէջ, ամենքս շուտաբա՛ժ իրարու կը
նայէինք, առանց կարենալ բացատրութիւն մը տալու:
Հեռահեռ, նորանոր մարդիկ կը հասնէին ծովկարը եւ
նուազ կը նետուէին: Բերնէ բերան տեղեկութիւններ կը
ջանայինք հաւաքել: Վերջապէս հասկցանք որ Օսմանեան
Պանթային գեւ՝ յարձակում եղած է:

— Տաճիկ պաշտօնեաները յարձակած են պանթա-
յին վրայ եւ ամսական պահանջած, կ'ըսէին նուակնե-
րուն մէջ:

Այս բացատրութիւնը հաւանական չլուեցաւ մեզի,
թէ եւ նոյն միջոցին բնաւ միտքերնէս չէս անցներ որ Դրօ-
շակեաններու ցոյցը տեղի կ'ունենար: Քիչ մը յետոյ բ-
սին թէ Մակեդոնացիները յարձակած են պանթային վրայ.
յետոյ ուրիշներ նոյնը հաստատեցին կրեւոացիներուն
համար: Կամայ կամայ աւելի իրազեկ անձեր սկսան գալ
եւ ամենէն կարը իմացանք ճշմարտութիւնը թէ՛ Հայերն
են յարձակում գործողները:

Այդ լուրը կարծես աւետիս մը եղաւ մեզի համար:
Տարօրինակ հպարտութիւն մը կը զգայինք հայերուն կող-
մէ եղած այդ յանդուգն փորձը իմանալով եւ յազմական
ակնարկներ կ'ուզէինք յոյն նուազարին, որ նոյնպէս
հիացական բացագոնչութիւններ կ'արձակէր: Մեր նա-
ւակը, կամայ կամայ, մօտեցած էր ֆարաքէոյի մօտ խա-
րըսեա՛ծ առաջատանաներուն. հոն կը սպասէինք որ
հանդարտէր ամէն բան ու ցամաք կլլէինք նորէն: Ես ու
ազգականս կ'ենթադրէինք թէ փորձը՝ հակառակ իր յան-
դըքնութեան՝ վիժած էր արդէն, թէ միայն բանի մը հրա-
զէն պարպուած ու մէկ երկու հօգի վերադարձած էին ու
ամէն բան պիտի հանդարտէր բանի մը վայրկեանէն. մա-
նուազն որ այլեւս հրազէնի ձայներ չէին լսուեր ցամա-
քէն: Իրա՛ւ ալ, կամայ կամայ, բարափին վրայ իրարան-
ցումը մեղմացաւ: Այլեւս շուտաբա՛ժ մարդիկ նուակները
չէին ցատքեր. ընդհակառակը ծովին վրայ գտնուողները
ցամաք կ'իլլէին ու զատ զատ խուսեք կազմած՝ կը խօ-
սակցէին իրարու մէջ: Նոյն միջոցին «ժիսօնա» կը հառ-
նէր եւ բարափին կը մատչէր յամբ յամբ: Նուազարին բ-
սինք որ մեզի ալ մօտեցնէ ցամաքին:

Ֆարափին վրայ առերեսով ճանդարտութիւն մը կը
տիրէր այդ ժամանակ: Միայն կամըջին զուրբ ձիւտար
զինուորներ կեցած էին եւ ճամբան փակած անցորդնե-
րուն: Երբ ցամաք կայնէր, ազգականս թուրք մը նշմարեց
որ կ'անցնէր եւ բաւ ինձի:

— Կը ճանչնամ այս մարդը, ստախանութեան լրտես
մըն է եւ մեզի կրնայ որոշ տեղեկութիւն մը տալ անցած
դարձածին վրայ:

Ես խոհեմութիւն համարեցի չերեւալ այդ կասկածելի
մարդուն եւ բարափին սօս գտնուած յունական դրօշ կը-
րող շողեմակոյի մը մտայ, սպասելով որ ընկերս երթայ
տեսնուի ստախանութեան լրտեսին հետ եւ տեղեկութիւն
բերէ: Բանի մը վայրկեանէն վերադարձաւ:

— Բան մը չէ եղեր, ստախանութեան լրտեսը բաւ
որ բանի մը սր ի կ'ան եր փորձեր են պանթան մտնել եւ
կողոպտել, բայց շնորհիւ վէհէ. Մուշթանին ստախանները
անմիջապէս հատեր եւ տաւջըք առեր են...

— Մե՛զը: Բնաւ մարդ չէ՞ զարնուեր:

— Չէ՛: Բանի մը ուղիովը պարպեր են, բայց յետոյ
ամենքն ալ ձերբակալուեր են:

Այս բացատրութիւնը ճշմարիտ թուեցաւ ինծի եւ սե- սակ մը սրանեղութիւն զգացի այդքան չնչին բանի մը համար այնչափ յուզմունք կրելու:

«Ժիոճոս» արդէն եկած մտաշած էր քարտիկն: Բազմութիւնը խոնուած էր շոգենաւին սանդիկին զլուխը եւ մտածեցի թէ լաւագոյն ատենն էր, առանց ուշադրութիւն հրաւիրելու վրաս, ջանալ ներս սպրդելու: Ուստի ազգա- կանին հետ ուղղուեցանք զէպի մեր առաւան դարեջրա- տունը, որ ճիշտ մաքսին զէմը կը գտնուի, եւ հոն իրեն մնաւ բարով ըսելէ հոգը, մտայ մաքսին մեծ դոնէն ներս, սուրիկ պէտք էր անցնիլ շոգենաւին մտանալու համար:

Ազգականս ինծի պիտի սպասէր կէս ժամի չափ եւ ե- թէ չլիբրալանայի պիտի հասկնար որ սպահովապէս շո- գենաւ մտած եմ:

Ոչ ոք բան մը հարցուց եւ ուշադրութիւն ըրաւ ինծի, մանաւանդ որ բնաւ ճամբորդի կերպարանք չունէի: Առանց բռնի, առանց վերաբրուի եւ նոյնիսկ առանց գաւազանի կ'երթայի: Սակայն ստիկանները պաշարած էին շոգե- նաւին սանդիկին զլուխը եւ ոչ մէկուն թոյլ կուտային ներս մտնելու: Այդ բանը չէի նախատեսած, կամ մտնաւանդ չէի կարծեր թէ Պոլիս հասնող շոգենաւի մը շուրջը այդ ստիկան հսկողութիւն կ'ըլլայ: Յետոյ հասկցայ թէ՛ բա- ցառաբար՝ նոյն օրուան համար էր այդ խտուութիւնը:

Քարտիկին վրայ կային Եւրոպացիներ որոնք փորձե- ցին սանդուխէն վեր ելլել, հակառակ ստիկաններու ար- զելքին, մին՝ մինչեւ իսկ՝ վեր ելաւ, սակայն հոն շոգե- նաւին պաշտօնեաները ետ գործուցին զինքը, ըսելով թէ բացարձակապէս արգիլուած էր ներս մարդ ընդունիլ: Պաշտօնեաներու այդ ընթացքը բոլորովին յուսահատե- ցուց զիս եւ հասկցայ որ անօգուտ էր սպասել հոն ու վե- րադարձայ գարեջրատուն՝ ուր կը սպասէր ազգականս:

— Անկարելի է «Ժիոճոս»ի մէջ մտնել, ըսի, բայց Մէսաժրոսի մէկ ուրիշ շոգենաւը կայ որ մաքսին մտանքը կեցած է, կարելի է կը յաջողիմ՝ հոն ապաստանիլ: Գուն տուն վերադարձիր: Եթէ աս ալ չյաջողի, կարք մը կը նստիմ ու Բերա կ'ելլեմ:

Բնագրաբար կ'ուզէի անպատճառ օտար շոգենաւ մը նեակ ինքզինքս, թէեւ նոյն միջոցին, ժամը թրքահան ինը կար, որ եւ է արտակարգ յուզում մը կամ շարժում մը չէր երևար չորս կողմն: Նորէն մտայ մաքսին մեծ դոնէն ներս եւ քարտիք ելայ: «Ժիոճոս»էն քիչ մը ան- զին կեցած էր Մէսաժրոսի Մարթիթի մէկ ուրիշ շոգենաւը, «Սիտոն», զոր քիչ առաջ նշմարած էի եւ որ նոյնպէս հե- սեւեալ օրը պիտի մեկնէր Մարտէյլ Շիրայի ճառքով: Իր սանդիկին շուրջը իխառ հսկողութիւն մը չի կար, միայն ստիկան մը նստած էր սանդիկին գէմ, աթոռի մը վրայ, կոնակը մաքսին ծայրը գտնուած փայտորմներուն տուած: Այդ ստիկանէն զատ՝ մաքսատան պաշտօնեայ մը շոգե- նաւին երկայնքը կը քալէր ծիւղով:

Սիկառէթ մը վառեցի եւ գացի նորէն «Ժիոճոս»ի մօտ: Ուղեւորները կը սկսէին գուրս ելլել: Ստիկանները, որոնք թիւր աւելի շատցած էր, մանրամասն կը քննէին անցազիրները, գծուարութիւն մը յարուցանել ու եռանդով: Ուղեւորներու սնտուկները եւ պայտուակները զիզուած էին քարտիկին վրայ: Բնանակիւնները կ'ուզէին առնել տանիլ, մինչդեռ մաքսին պաշտօնեաները օրինական ձեւակերպու- թիւններ կը հնարէին՝ ուղեւորներու համբերութիւնը սպա- սելու եւ պախշիլ մը փրցնելու համար: Պահ մը ձայները յեծցան եւ վէճի մը կերպարանք առաւ գործը: Նոյն մի-

ջոցին մաքսատան այն պաշտօնեան, որ «Սիտոն»ի եր- կայնքը ժուռ կուգար, գէպի հոն առաջացաւ եւ ինքն ալ մասնակցեցաւ վիճարանութեան:

Այդ մարդը կասկածելի երևցած էր ինծի եւ ճիշտ իր հեռանալուն կը սպասէի շոգենաւ մտնել փորձելու համար: Անմիջապէս օգուտ քաղեցի իր գրագումէն եւ գէպի «Սի- տոն» սկսայ քալել, միշտ աչքիս ծայրը աթոռին վրայ նստած ստիկանին ուղղած: Սիկառէթը բերանս, ան- տարբեր քալուածքով եւ կամաց կամաց հասայ «Սիտոն»ի սանդիկին զլուխը: Կրնայի սանդուխէն վեր ելլել գեռ ստի- կանը չշարժած տեղէն, մանաւանդ որ նոյն միջոցին որ եւ է զիտադութիւն չէր ընել ինծի, սակայն չհամարձակեցայ ու նորէն գործայ գէպի «Ժիոճոս»: Վէճը կը շարունակէր եւ մաքսատան պաշտօնեան անով գրագած էր բոլորովին: Կը յուսայի որ ստիկանն ալ պիտի գար խոտուէր այդ վէճին, բայց ինք չէր շարժեր տեղէն, կարծես փակած էր աթոռին:

Տեսակ մը նեղութիւն կը զգայի եւ ինքզինքս կը գա- տապարակի որ առաջին անգամ «Սիտոն»ի սանդիկին մտա գտնուած միջոցին չէի օգտուած առիթէն եւ շոգենաւ նե- տած ինքզինքս: Ինծի տնանի կուգար որ երկրորդ անգամ մտնեալու անպատճառ զիտադութիւն պիտի բնէր աթո- ռին վրայ նստող ստիկանը: Սպասեցի այսպէս վայր- կեաններ որոնք ժամերու չափ երկայն թուեցան ինծի: Միջոց մը աչքս գործուցի տեսնելու համար ստիկանին զիբը: Միշտ աթոռին վրայ գամուած էր եւ հիմա քովը սուրիշ մարդ մըն ալ կար որուն հետ կը խօսակցէր: Այդ միջոցին սրտի սեղմում մը զգացի եւ յուսահատութեան պէս բան մը սկսաւ գալ վրաս: Չպիտի կրնայի մտնել շո- գենաւ...:

Յանկարծ հրազնի պայթիւնները վերսկսան, կալա- թայի կողմէն: Սիրտս սկսաւ աւելի սեպիկն սրտիկել: Ռե- բեմն ամէն բան հանդարտած չէր, ինչպէս ստիկանու- թեան լրտեսը կ'ապահովէր ժամ մը առաջ: Կոխը կը շարունակէր եւ յեղափոխականները բազմութիւն էին, քանի որ ժամերէ ի վեր ստիկանութիւնը չէր կրցած նուաճել զանոնք: Եթէ շոգենաւ չկարենայի մտնել՝ գրեթէ անկա- րելի պիտի ըլլար նաեւ կալաթայէն անցնելով Բերա ելլելը:

Կացութիւնս անտանելի կը դառնար: Վախը չէր այն- չափ, որչափ անօգուտ տեղը գոհուելու դադափարը որ զիտ կը շարժարէր: Ու կը խորհէի որ այդ միջոցին եթէ ետ գտնուայի վստահօրէն պիտի ձերբակալուէի մինչեւ Բերա չհասած: Ու մէկէն աչքիս առջեւ ցցուեցան այդ հաւանա- կանութեան ամբողջ զգուելի մանրամասնութիւնները: Ստ- րիկանութեան գուռը իր գարշիլի ազտոտութեամբ, ստի- կաններու վարմունքը, ազէտ, կոպիտ, վայրագ հարցա- քննիչի մը առջեւ համար տալու ստորնութիւնը, վերջա- պէս բանտին ոչիլներն ու շարժարանքները: Դեռ անցած դարձածին վրայ այնչափ անորոշ գաղափար մը ունէի որ շարժուելու պատահականութիւնը, որ նոյն ժաման ամե- նէն իրական ու սոսկալի վտանգն էր, մաքս չէր անց- ներ բնաւ:

Մաքսատան առջեւ զիզուած կապոցներէն մէկուն վրայ կայ շուրջս պիտիւն համար: Քարտիք ամբողջացած էր բոլորովին. միայն մաքսատան պաշտօնեաները կ'երև- ալին: Կամրջին գլուխը միշտ կեցած էին հեծեալ զին- ուորներ, իսկ կամրջին վրայ գրեթէ մարդ չի կար: Թօփ- հանէի կողմը՝ նոյնպէս՝ ճամբան զոցուած էր հեծեալ ստիկաններով: Ճշմարտապէս կը սկսէի նեղուիլ եւ տար-

աամ երկիւզներ զգալ: «Ժիոսն»ի մօտ վէճը աւարտած էր եւ բեռնակիրներն ու մաքսատան պաշտօնեաները ցըրուած էին. միայն քանի մը սասիկաններ կը մնային սանդիւխն գլուխը: Տեսակ մը նախանձով կը նայէի այդ նաւին: Անոր մէջը ըլլալ, ի՞նչ երջանկութիւն: Բայց արդէն շոգենաւին մուտքը փակուած էր եւ նաւազները զբաղած էին վերնայարկը մաքրելու:

Նոր սիկառէթ մը վառեցի եւ սկսայ առաջանալ դէպի «Սիտոն»: Ոստիկանը, աթոռին վրայ նստած, միշտ կը խօսակցէր նորեկին հետ: Կամաց կամաց քալելով հասայ իրենց մօտ, շոգենաւին սանդիւխն ճիշտ դիմացը: Երկու հակառակ հոսանքներու մատնուած էի. մին զիս դէպի սանդիւխը կը մղէր, միւսը թող չէր ի տար մօտենալու: Կը ջանայի վարաճուսն ծածկել ոստիկանէն, մանաւանդ որ եթէ անգամ մը իր ուշադրութիւնը զբաւէր, ա՛լ գործս լճացած էր: Ուստի նորէն անցայ «Սիտոն»ին քովէն ու վացի դէպի Թօփհանէի կողմը: «Սիտոն»ին անմիջապէս քովը խարսխած էր անգլիական շոգենաւ մը, ուրիշ քիւրա բեռնակիրներ ածուխ դուրս կը հանէին: Պահ մը կեցայ այդ շոգենաւին առջեւ եւ գիտեցի բեռնակիրներու երթուիւնը, յետոյ ճամբաս շարունակեցի քարափին երկայնքը, անտարբեր նայուածքներ նետելով ատաղձ բեռցած շարք մը առաքատանաւերու, որոնք իրենց բեռները կը պարպէին նմանապէս:

Նորէն հրազենի ձայներ կրկնուեցան Կալաթայի կողմը, որոնց յաջորդեցին պրոպալից պայթիւններ, թմրանօթի ձայնին պէս, ճիշտ ինչպէս լսած էինք, քանի մը ժամ առաջ, ազգականս եւ ես, երբ Յոյնի մը մակոյկին մէջ ապաստանած էինք: Ա՛լ կասկած չունէի թէ յեղափոխականները ուսմբերով զինուած էին ու կոխը կը շարունակէին:

Կը սկսէի վախնալ: Մանաւանդ քարափին վրայ տիրած հանդարտութիւնը եւ ամայութիւնը սոսկում հուտար ինծի: Ետ դարձայ, այս անգամ արագ արագ քալելով: Որոշապէս միտքս դրած էի «Սիտոն»ի սանդիւխն վեր մագցիլ, քովը հասածիս պէս: Հեռուէն կը տեսնէի ոստիկանը որ միշտ կը խօսակցէր իր ընկերոջ հետ: Քայլերուս ձայնը առնելով դէպի ինծի դարձաւ եւ նայեցաւ կասկածոտ նայուածքով մը: Միայն ես կայի այդ միջոցին մաքսատան առջեւ պտրտող: Հրազենի ձայները կը շարունակուէին հիմա անընդհատ եւ հեռուէն հեռու ազազակներ կը հասնէին ականջիս: Ջրային յուզում մը տիրած էր վրաս եւ հեազհեաէ կ'արտգէի քայլերս: Գրեթէ վազելով հասայ շոգենաւին սանդիւխն գլուխը եւ ոտքս աստիճաններուն վրայ նետելով՝ սկսայ վեր խոյանալ: Կը լսէի ոստիկանին ձայնը որ կը գոչէր ետեւէս. — «Էյ, պանս «պաք, եասաք տըր»: Երբ շոգենաւին կաւը շակիկ վրայ հասայ ոտքերս կը գողային: Կարծես վազելով լերան մը դադարը ելած էի:

- Նաւաստի մը կեցուց զիս եւ խօսութեամբ ըսաւ.
- Ի՞նչ կ'ուզէք, պարոն:
- Նաւապետը տեսնել կ'ուզեմ, գործ ունիմ հետը:
- Վերն է, պատասխանեց նոյն խօսութեամբ, շոգենաւին խելքին կողմը ցոյց տալով:
- Նաւաստիին այս ընդունելութիւնը շուտեցուց զիս քիչ մը եւ սկսայ մտածել թէ արդեօք նաւապետն ալ զիս գործ չի պիտի հանել տար, մանաւանդ որ շոգենաւին մեկնումի օրը չէր:
- Վեր կ'ելլեմ եւ կը տեսնեմ նաւապետը որ բազկա-

թոռի մը վրայ նստած՝ կը ծխէ հանդարտօրէն: Յիսուն տարեկանի մօտ, ալիխան մօրուքով, բարեղէմ ու քաջալերիչ կերպարանքով մարդ մըն է:

Ակնածութեամբ կը մօտենամ իրեն, ջանալով կարելի եղածին չափ ծածկել յուզումս:

— Պարոն նաւապետ, կ'ըսեմ, Շիրա պիտի երթամ, գիտեմ որ շոգենաւը վազը կը մեկնի, բայց կ'ուզեմ այսօրուրնէ հոս մնալ: Նաւողչէքին համար եթէ պէտք է աւելի բան մը վճարել, պատրաստ եմ:

— Հոյ էք դուք, կը հարցնէ:

— Այո՛, պարոն, կը պատասխանեմ յանցաւորի մը պէս որ կը ստիպուի իր յանցանքը խոտտովանելու, եւ այսցեալման կը ներկայացնեմ իրեն, որուն վրայ դրուած է նաեւ պաշտօնս:

— Շատ լաւ, կը պատասխանէ, հոս մնացէ՛ք, բայց շոգենաւին ետեւի կողմերը պատեցէ՛ք, որպէս զի ձեզ չը տեսնեն դուրսէն:

Նոյն միջոցին աթոռին վրայ նստող ոստիկանը, քիչ մը ատեն վարանելէն ետքը, շոգենաւին սանդիւխներէն վեր ելած էր եւ կը պահանջէր որ զիս իրեն յանձնեն:

— Հոս ֆրանսական հող է, պողոտայ յանկարծ նաւապետը վերէն, դուրս ելիր, շո՛ւա:

«Սիտոն»ի թարգմանը, որ ձերուկ յոյն մըն էր, ոստիկանին թարգմանեց այդ խօսքերը:

Ոստիկանը գժգժ կերպարանքով մը եւ քթին տակէն բաներ մը մտնելով վար իջաւ:

Ա՛լ ազատած էի:

Առաջին գործս եղաւ ֆէսս ծովը նետել եւ գլուխս դնել քէքի մը զոր զրպանս պահած էի:

Նաւապետին ինծի ըրած յանձնարարութիւնը աւելի լաւ կատարելու համար քաշուեցայ նաւին վերնայարկը գտնուած քէօշկին մէջ: Հրազենի ձայներ կը շարունակուէին լսուիլ ցամաքէն, որոնց ատեն ատեն կը խառնուէին մեծազդրող պայթումներ:

Հազիւ թէ քսան վայրկեան անցած էր որ քէօշկին մէջ կը գտնուէի, երբ նաւապետը ուրիշ ֆրանսացիի մը ընկերակցութեամբ ներս մտաւ:

— Ահաւասիկ այն Հայը, ըսաւ զիս ցոյց տալով, որուն մասին խօսեցայ:

Եւ ինծի գտնալով յարեց.

— Մեր ընկերութեան գործակալութեան անօրէնն է:

Քառասուն տարեկանի մօտ, խարտեաշ մարդ մըն էր, անոյշ կապոյտ աչքերով:

Այս ներկայացումը մտասանջութիւն պատճառեց ինծի: Ի՞նչ կ'ուզէին ինէ:

— Շատ ուրախ ենք որ, ըսաւ նորեկը, մեր շոգենաւին մէջ զձեզ կը հիւրընկալենք: Կատարեալ ապահովութեան մէջ էք հոս, բնաւ հող մի՛ ընէք, ո՛չ ոք կրնայ այլ եւս ձեզի գալիլ:

Շնորհակալութիւնս յայտնեցի ա՛յս յայտարարութեան վրայ:

Տնօրէնը աւելցուց.

— Գուցէ քովերնիդ պէտք եղածին չափ զբամ չի կայ, ուստի հրահանգ տուած եմ որ ձեզ ձերխարս մինչեւ Մարսէյլ փոխադրեն, եթէ ուզէք:

Նորէն շնորհակալ ըլլալով՝ պատասխանեցի թէ քովս զբամ ունէի եւ կ'ուզէի վճարել:

— Աւելի լաւ, աւելի լաւ, ըսաւ խնդալով, յետոյ շա-
րունակեց. — Գիտէ՞ք ճիշտ ժամանակին շոգենաւ ապաս-
տանած էք. եթէ քառորդ մը ուշ մնայիք չպիտի կրնայիք
ներս մտնել: Կալաթա իրար կը ջարդեն կոր այս ժամուս:

Եւ բարեւելով դուրս ելաւ նաւապետին հետ:

Հիմա որ ապահովութեան մէջ կը գտնուէի ու անձ-
նապահպանութեան մտատագնապս անցած էր, սկսայ մը-
տածել անոնց վրայ որոնք դուրսն էին: Ինծի ընկերացող
ազգականս մանաւանդ մտատանջութիւն կուտար ինծի: Ը-
սած էր թէ կառք մը պիտի նստէր ու Բերա ելլէր: Արդեօք
կառք գտած էր, հասած էր մինչեւ Բերա, թէ ճամբան
զլիսին փորձանք մը եկած էր: Գեռ այդ միջոցին կը կար-
ծէի որ ամբողջ խառնակութիւնը կալաթայի մէջ սահմա-
նափակուած էր:

Դուրս ելայ քեզիկէն՝ կամրջակին վրայ ժուռ գալու
համար. այնչափ յուզուած էի որ չէի կրնար տեղ մը նըս-
տիլ կամ հանգարտ մնալ:

Շոգենաւին մէջ նոր մարդիկ ապաստանած էին, ա-
մենքն ալ ֆրանսացի, երկու մայրապետ, վարդապետ մը,
երեք կին եւ երիտասարդ մը: Ասոնցմէ գաս կար նաեւ
ծերունի ռուս մը իր ազգական հետ, որոնք արդէն շոգենա-
ւին մէջ կը գտնուէին: Մտակցայ իրենց: Ամենքն ալ յուզ-
ուած՝ շփոթած կը խօսէին: Ոչ որ ստոյղ բան մը գիտէր
անցած վարձածէն: Հրազէնի եւ ռուսի ձայներ լսած էին,
յետոյ տեսած էին որ խանութները բոլոր կը գոցէին ու
ամէն մարդ կը փակէր. իրենք ալ, բարափին ոտտերը
գտնուած ըլլալով, շոգենաւը ապաստանած էին:

Ժամը տաճկական ինն ու կէսին ատենները, յանկարծ
կը տեսնեմ որ շոգենաւին մարդիկը եւ հոն ապաստանած
ֆրանսացի նորեկները ազմկալից կը վազեն կամրջակին
վրայ, գէպի ցամաքին եզրը:

Ի՞նչ կ'անցնէր արդեօք:

Սրտատրոփ ես ալ դուրս կ'ելլեմ քեզիկէն, ուր կը
գտնուէի նոյն վայրկեանին:

Սոսկալի տեսարան:

Քարափին վրայ, ճիշտ «Սիտոն»-ի զիմացը, բասնի
չափ թուրք, հաստ բերերով զինուած, կը ծեծին չորս հայ
բեռնակիր: Բեռնակիրները արդէն գետին ինկած են: Որ
եւ է ազազակ չի լուսի իրենց կողմէ, միայն թուրքերուն
պոռոչուքը կը խառնուի բերերու իրար զարնուելու չոր
ձայնին: Քանի մը վայրկեանէն հարուածները կը գազրին,
ոճրագործները կը յարձակին զիակներուն վրայ, անոնց
զրպանները կը սրստեն: Քիչ մը ետքը, բերերը սակերնին
զարկած՝ թիւրքերը յաղթական կը մեկնին եւ անբերելի
կ'ըլան բարափին վրայ բացուած փողոցներէն մէկուն մէջ:

Կը տեսնենք շարք մը հեծեալ զինուորներ որոնք ան-
տարբեր հանգարտութեամբ հանգիստանա կ'ըլլան եւ կը
պահպանեն այն փողոցին մուտքը ուր այդ ոճիրը տեղի
կ'ունենար:

Չորս հայ բեռնակիրներու մարմինները կ'ծկուած՝
բոլոր վարձած՝ կը մնան գետինին վրայ:

Շոգենաւին մէջ ամենքս յուզմունքէն կը գողանք: Կի-
ները կը սկսին լալ:

Նոյն միջոցին երկու ոստիկան կ'երեւան փողոցին
մէջ. արագ արագ կը մտնեն գիտիներուն եւ ոտքով կը
զարնեն բեռնակիրներուն գլխին: Մին որ գետ չէր մեռած՝
խեղճուկ ճիչ մը կ'արձակէ եւ թեւը՝ որ պարզած էր՝ կը
ջանայ զլիսին սանիլ:

Այն ատեն տհոյզ բան մը կը տեսնանք:

Ոստիկաններէն մէկը մէջքէն գաշոյն մը կը հանէ եւ
հեղահեղ վեց հարուած կուտայ մահաճիւղէն կողերուն:
Արիւնը կը տարածուի քարափին վրայ:

— AH! LES COCHONS! AH! LES CRAPULES! կը գոչեն նա-
ւին պաշտօնեաները ոտքերնին գետին զարնելով:

Եւ մին, «Սիտոն»-ի մատակարարը, ուղիւղէր կը
հանէ գրպանէն.

— Ո՛չ, ա՛լ չեմ կրնար հանուրժել, պոռալով:

Նաւապետը, տեսնելով մատակարարին շարժումը,
բողբ կը վազէ ու թեւերէն կը բռնէ.

— Ի՞նչ կ'ընէք, խենթեցածք, չէ՞ք գիտեր թէ ի՞նչ մեծ
պատասխանատուութիւն մը կը բերէք վրանիս:

Եւ ուղիւղէր ձեռքէն աննելով կը պահէ:

Քիչ մը ետքը նորէն ազմուկ մը կը լուսի զիմացի
փողոցին ծայրէն ու կը տեսնենք հայ բեռնակիր մը որ
խնդի պէս վազելով գէպի քարափ կուգայ, մինչեւ քիչ
մը առաջուան բերերով զինուած մարդասպանները իր ե-
տեւէն ինկած են: Շոգենաւին մարդիկը կը սկսին թեւեր-
նին շարժել եւ նշան ընել մարդուն որպէս զի հոն գայ:
Խեղճը կը տեսնէ ու կը լալ մեր շարժումները եւ հրաւերը,
սիրտ կ'անէ ու աւելի արագ կը սկսի վազել: Կը հասնի
քարափին վրայ ու յանկարծ կը տեսնէ իր հայրենակից-
ներուն չորս զիակները...: Բոպէ մը կը վարանի. մենք
կը կրկնապատկենք մեր շարժումները եւ ազազակները չ
բայց շոգենաւ գալու համար ստիպուած է բաւական եր-
կար շրջան մը ընել, որովհետեւ քարափին այդ մտքը
փայտորմներով բաժնուած է: Այսու հանգրձ մարդը կը
վազէ յուսահատօրէն, մանաւանդ որ մարդասպանները
իրմէ բաւական հեռու են: Նաւապետը հրաման կ'ընէ որ
երկու նաւաստի սանդիլին զլուխը սպասեն, որպէս զի
մարդը հասնելուն պէս նեքս անեն:

Ամենքս լուռ ու բուռն յուզմունքի մը մատնուած
զինքը կը գիտենք:

Նոյն միջոցին ծեր թուրք մը, որ հանգարտիկ նստած
էր քարափին վրայ գտնուած սրճարաններէն մէկուն մէջ,
տեղէն կ'ելլէ եւ ճիշտ բեռնակիրը անցած միջոցին աթոռ
կը նեղէ անոր ոտքերուն մէջ: Խեղճը գետին կը զլուսի:
Մարդասպանները կը մտնեն ազմկալից հայհոյանքներ
եւ ուրախութեան պոռոչուքներ արձակելով: Իրեն հաս-
նելու վրայ են, երբ նորէն ոտք կ'ելլէ ու կը սկսի վազել:
Դահիճներէն մին իր հաստ գաւազանը կը նեղէ ետեւէն,
բայց հարուածը կը վրիպի, ետեւէն ուրիշ գաւազան մը կը
հասնի եւ այս անգամ բեռնակիրը նորէն կ'իյնայ գետին:

Անկարելի է նկարագրել մեր յուզմունքը եւ կատաղու-
թիւնը:

Վերջապէս ոճրագործները կը հասնին եւ կը սկսին
իրենց գործը:

Չարսանալի բան. մարդուն կողմէ բնաւ ճիչ կամ
ազազակ չի լուսի: Կ'երեւի թէ վախէն լեզուն բռնուած
է: Միայն բերերուն չոր չոր ձայները կ'իմանանք ու
ահա՛ մարդը կը մեռնի:

Հիմա հինգ գիակ կար աչքերնուս առջեւ:

Ոստիկաններէն մին որ կը հսկէր այդ սպանութիւն-
ներուն, գէպի թօփահանէի կողմը կ'երթայ եւ քիչ մը ետ-
քը կը վերադառնայ մուհաճիբի սայլակով մը: Սայլորդին
հետ մէկիկ մէկիկ գիտիները կը ծողվեն ու կը լեցնեն

սայլակին մէջ, յետոյ Հին ազտոտ լաթ մը կը ծածկին վրան, ոստիկանը կը նստի սայլորդին քով եւ ճամբայ կ'ընեն գէպի կամուրջ:

Տեսակ մը թեթեւացում կը զգանք երբ դիակները կը հեռանան մեր աչքին առջևէն: Կիները կը գազրեցնեն իրենց լացը եւ շոգենաւին պաշտօնեաները այլեւս չեն հայհոյեր թուրքերուն գէմ:

Նորէն ազադակ մը կը լսուի քարափին վրայ ճիշտ «Սիտոն»ի մօտ: Քանի մը թուրքեր, միշտ հաստ բերերով դինուած, կը հալածեն մարդ մը որ գէպի շոգենաւին սանդուխը կը վազէ: Խեղճը կը յաջողի մինչեւ սանդուխի վրէպը հասնելու, բայց հոն՝ յուզումէն, վախէն, յոգնութենէն, կը մարի կ'եյնայ:

— Շո'ւտ վեր առէք այդ մարդը, կը պոռայ նաւապետը քանի մը նաւաստիներու, որոնք արդէն վար իջնելու կը պատրաստուէին:

Մարդը մարած վիճակի մէջ կը բերեն կամրջակին վրայ ուր «Սիտոն»ի բժշկին օգնութեամբ ինքզինքը կը գտնէ:

Յիտուն տարեկանի մօտ, սեւեր հագած հայ մըն է: Պոլսոյ շուկան կը գտնուի եղեր երբ ցոյցին լուրը հասեր է եւ խանութները սկսեր են զոցուիլ: Քանի մը ժամ ապաստաներ է խանի մը մէջ, յետոյ կարծելով թէ ամէն բան հանդարտած է՝ ճամբայ ելեր է դռնալու համար իր տունը, Բանկալթի: Երբ կամուրջ հասեր է տեսեր է որ անկարելի է անցնիլ, որովհետեւ հեծեալ զինուորներ զոցած էին ճասքան, եւ ստիպուեր է նաւակով գալ մինչեւ Կալաթայի քարափը, ուր հազիւ թէ ստքը զրեր է ու ահա՛ մաւախնայի մը մէջ գտնուող թիւրքեր սկսեր են զինքը հալածել:

Խեղճը իր պատմութիւնը պատմած ատեն կը զոզար տակաւին եւ սոսկումով աչքը չորս վին կը պտտցնէր կարծելով թէ զինքը կը հալածէին:

Եւ իրա՛ւ ալ նոյն միջոցին երկու ոստիկան շոգենաւին վեր ելան եւ նաւապետին հետ խօսիլ ուզեցին նաւուն թարգմանին միջոցաւ:

— Երկու հայ կը գտնուի շոգենաւին մէջ որոնք հաւառակ կանոնի եւ առանց անցազրի շոգենաւ մտած են մտիկ չընելով ոստիկանին արգելքը, անոնք վնասուելու եւ կանք, ըսին:

Ոստիկանները ինծի եւ նորեկին կ'ախնարկէին:

— Դո՛ւրս ելէք, զոչեց նաւապետը իբրեւ պատասխան:

— Ըսէ՛ք որ հրաման ունինք քոմիսէր պէյին կողմէ, ըսաւ ոստիկաններէն մէկը թարգմանին դռնալով:

Թարգմանը բացատրեց ոստիկանին խօսքերը:

— Դո՛ւրս ելէք, կրկին նաւապետը այս անգամ աւելի բարձրացնելով ձայնը:

— Պէտք է որ միասին տանինք երկու հայերը, որովհետեւ անցազրի չունին եւ փախչելով մտան շոգենաւ, պատասխանեց ոստիկանը յամառօրէն:

Այն ատեն նաւապետը նաւաստիներուն դռնալով հրամայեց.

— Դո՛ւրս հանեցէք սա մարդիկը:

Եւ նաւաստիները ուրախ ըլլալով որ վերջապէս առիթ մը կը ներկայանայ գտնէ թեթեւ վրէժ մը լուծելու այդ հրէջներէն, նետուեցան ոստիկաններուն վրայ եւ զրիթէ գլտորելով վար ըրին սանդուխէն:

Այս տեսարանը սիսիփանք մը եղաւ ամենուս համար:

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ

Ֆ Ր Ա Ն Ս Ա Յ Ի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռ ը վ ի ռ ա ը Բ ա ռ ի մ այ ի ս 15 ի ն եւ յունիս 15 ի ն հրատարակեց Արեւելեան հարցին մէջ Ֆրանսայի արդի քաղաքականութեան վրայ Պ. Լալիսի ուսումնասիրութիւնը: «1870 էն ի վեր այս տագնապը, կ'ըսէ պատմաբան բրոֆէսէօրը, աշխարհիս էն ծանրն է, եւ «ի հարկէ երեւան պիտի բերէ տակաւին ինչ արժեքիս: «Արեւելքի գործերուն մէջ մեր հետեւած ընթացքին վրայ «ճշմարտութիւնը գիտնալ կարելու է:» Քանի մը յօգուածով պիտի ամփոփենք Պ. Լալիսի տեսութիւնները որոնք շատ նորութիւններ կը պարունակեն հայ ընթերցողին համար:

* * *
Ա.

Հիմակուան տագնապին անմիջական պատճառը Սասունի հայ ժողովրդին 1894 յուլիս, օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներուն կոտորածն է որով հաստատուեցաւ նոյն տարուան փետրուարին Կ. Պոլսոյ Ֆրանսական դեսպան Պ. Քանպոնի հոշակաւոր տեղեկագրութիւնը թէ «Արեւելեան ինչպիսիք Ասիոյ կողմէն պիտի վերաբացուի ու Եւրոպա պիտի ստիպուի միջաւտել:»

Ուարդարեւ Եւրոպա օրինապէս պարտաւորուած է միջամտելու: Պետութիւնները Պերլինի գաշնագրով իրաւունք կ'ստանային հսկել բարենորոգումներու գործադրութեանը հայաբնակ գաւառները: Ամբողջ Եւրոպայի միանգամայն պատկանող այս պարտականութենէն զատ երեք պետութիւն ալ Հայաստան միջամտելու սասնաւոր պատճառ ունէին: Ռուսիա՝ թիւրքիոյ եւ Պարսկաստանի հետ բաժնած է հայ ժողովուրդը, ու երկար ատենէ ի վեր հոգը կ'ընէր հայկական շարժումները: Անգլիա Կիպրոսի գաշնագրին մէջ մասնաւոր պայմաններ զրած էր ասիական թիւրքիոյ բարուր վարչութեանը համար: Ֆրանսա պաշտպանն է հայ կաթոլիկ եկեղեցիին սրունք գոյութիւնը եւ կազմակերպութիւնը 1830 ի ն իր դործն է. անկէ ի վեր արաբքին գործերու պաշտօնատունը հայաբնակ գաւառներուն մէջ նպաստներով անդադար օգնած է ֆրանսացի կրօնաւորներու զբաղւոյններուն եւ ձեռնարկներուն: Իրաւ է որ կաթոլիկ հայերը բազմաթիւ չեն, բայց կաթոլիկներու պաշտպանութիւնը ֆրանսական ազդեցութեան միջոցներէն մէկն է Հայաստանի մէջ: Աշխարհիս բոլոր երկիրներէն Ֆրանսան է որ իր գրականութեամբը, գաղափարներովը եւ ազատական աւանդութիւններովը մինչեւ հիմա ամենէն մեծ բարոյական եւ մտաւորական ազդեցութիւնը ի գործ կը դնէր հայ ժողովրդին վրայ:

Ֆրանսան է որ 1860 էն 1870 ստեղծեց Հայոց ազգային շարժումը կարծելով թէ իր շահը եւ աշխարհիս ուժերուն հաւասարակշռութիւնը կը պահանջէին ուսական ուսմանազդիսին վրայ կազմակերպել ուսմանուն մէջ ձուլուելու գաղափարին գէմ ապստամբ ժողովուրդ մը: Ֆրանս

սա 1868 ին գիւանազիտորէն միջամտեց ի նպաստ Չէյթունի, ուր մեր անունը յարգուած կը մնայ :

Բայց այս երեք պետութիւններուն համար հայկական խնդիրը Արեւելեան խնդրին մէկ կտորն է : Այս մեծաաւարած խնդրին մէջ անոնցմէ ամէն մէկը ահագին շահեր ունի . Անգլիոյ եւ Ռուսիոյ շահերուն համար Հայաստանը վէճի կէտ մըն է, ինչ որ Պ. Հանթթօ շատ լաւ բացատրեց երեսփոխանական ժողովին մէջ 1896 նոյեմբեր 3 ին . « Երկար ատենէ ի վեր, ըսաւ, բրիտանական գիւանազիւ « տութիւնը ուշագիւր կը հսկէ կողկասի, Սեւ ծովուն, « Վսփորի ափերուն այնքան մօտ երկրի մը, որուն « զերբքը Տիգրիսի ու Եփրատի ազբիւրններուն քով կրնայ « վճռական ըլլալ Ասիոյ ճակատագրին վերաբերող խնդիր . « ներու մէջ : » Ուրեմն Անգլիա եւ Ռուսիա Արեւելեան խնդրին մէջ շահ ունին՝ իբր Ասիոյ ժողովուրդները իրենց մէջ բաժնած պետութիւններ, եւ միանգամայն, Անգլիա՝ իբր Միջերկրականի պետութիւնը, Ռուսիա՝ Միջերկրականին իր բաժինը ուզող :

Ֆրանսայի շահերը ուրիշ տեսակի են : Արեւելքի մէջ մեր ազդեցութիւնը մեծ է, եւ ասոր ծագումն ու պայմանները յայտնի են : Մենք հոն կաթոլիկ առաքելութիւններուն, ո՛ր ազգին ալ որ պատկանին, պաշտպաններն ենք միջազգային իրաւունքով, ու տեղական կաթոլիկ եկեղեցիներուն վրայ կը թեւարկենք երկարամասնակեայ աւանդութեան մը զօրութեամբ : Սակայն մեր կաթոլիկ պետութեան պաշտօնը մեզի իբր թշնամի նկատել չի տար ոչ-կաթոլիկ ժողովուրդներուն : Արեւելքի մէջ ամէն կրօնք կը յարգուի բացի անկրօնութենէն : Ու յետոյ, մեր խնամակալութեան եղանակը մեզի համակիրներ կը զբաւէ կաթոլիկ համախմբումներէն դուրս ալ . մեր բարեգործական եւ կրթական ձեռնարկները դաւանանքներու միջեւ խտրութիւն չեն գներ, եւ մեր պաշտպանած առաքելութիւնները, մասնաւորապէս Ֆրանսականները, ներողամիտ են : Ետտ պարագայի մէջ մեր միսինարները ու հիւպատոսները միջամտած են հանգրաւաններու համար կրօնական վէճեր, եւ ամէն անգամ որ մարդասիրական խնդիր մը ծագի, անոնք միայնակ կամ իրենց պաշտօնակիցներուն հետ համաձայնութեամբ միջամտած եւ օգնած են առանց դաւանանքի, կրօնքի խտրութեան : Ուրեմն Ֆրանսան Արեւելքի մէջ կ'երեւի իբր վեհանձն եւ ազատական մեծ պետութիւն մը . հոն ամէն ոք գիտէ թէ ատենօք օտմանեան տիրապետութեան տակ զանուող եւ հիմա ազատագրեալ ժողովուրդները մասամբ մեզի պարտական են իրենց անկախութիւնը, եւ միեւնոյն բազաւարութեան ըղձացողները մեր վրայ են յուսադիր :

Ֆրանսայի այս թեւարկութիւնը Դրան քով իր ունեցած վարկին պատճառներէն մէկն է . եւ օսմանեան կայսրութեան ժողովուրդներուն վրայ մեր ազդեցութիւնը՝ կը հաստատէ Սուլթանին աչքին Ֆրանսայի մեծութիւնը, առանց սակայն կասկածներ յարուցանելու, վրդուում պատճառելու, վասն զի Սուլթանը գիտէ թէ մենք կրօնքի պատրուակին տակ իրմէ հող խլելու հետամուտ չենք :

Մեր բարոյական ու քաղաքական հեղինակութեան եւ մեր նիւթական շահերուն միջեւ ալ մեծ առնչութիւն կայ : Պէտք չէ կարծիլ թէ Արեւելքի մէջ մեր չորս գարու քաղաքականութիւնը պարզապէս զգացումի հետեւանք է եւ թէ մենք կաթոլիկներուն — « լատիններուն » — պաշտպանը եղած ենք լոկ մարդասիրութեամբ կամ կրօնասիրական եռանդով : Առեւտրական քաղաքականութիւնը

այսօրուրնէ չ'սխիւր . ծովային պաշտօնատան գիւանին մէջ կը գտնուի ֆուլպէրի ընդարձակ մէկ տեղեկագիրը ֆրանսական վաճառականութեան տարածումին համար Հայոց օգտակարութեան մասին : Արդ վաճառականութեան պէտքերը Արեւելքի մէջ նոյն են այսօր ինչ որ էին ժամանակաւ . եւ առաջին պէտքն է միջնորդի մը ներկայութիւնը երոպացի արտադրողին ու միւսիւրման սպասողին միջեւ : Արեւելքի վաճառականութիւնը դեռ տակաւին մանրաւաճառութիւն է . իսլամը նախահոգակ հետատեսութիւն չունի, եւ ոչ ալ գողափար կազմած է յանձնառութիւններու վերայ . անտեղեակ է մեծաքանակ վաճառումներու սովորութեան . իր պէտքերուն չափովը կը գնէ ու կը վճարէ հունձքի եւ վարձակալութեան դիպուածներուն համեմատ . չէք, փոխանակագիր, գեղչ, վարկ անձանթօք են իրեն եւ չեն յարմարի կեսնքի վրայ կազմած իր հիմնական գողափարին որ է ճակատագրային ձգէ — երթան : Բայց որովհետեւ առանց այս պայմաններուն ալ վաճառականութիւնը մենք երոպացիներս չենք կրնար ըմբռնել, ուստի ամեն տեղ բնիկ միջնորդի մը պէտքը կայ մեր գործերը տեսնելու համար . ան է որ ապսպրանքները կ'ընէ եւ կը գանձէ զրամը միւսիւրմանին բնահաճոյքին համեմատ : Արեւելքի լատինները մեզի համար այս միջնորդի գերը կատարեցին երեք դար, եւ անոնց շնորհիւն էր որ 16րդ եւ 17րդ դարերուն մէջ արեւելեան վաճառականութեան մենաշնորհը ունեցանք :

Տեղացի միւս բրիտանները՝ յունագաւան, հայ կնի, ան ատեն գրեթէ ազդեցութիւն չունէին առեւտրական հըրապարակներուն վրայ . սակայն 18 րդ դարէն սկսած ծովահէնութիւնը անբեւութանալով, ուրիշ բրիտաններ իրենց բաժինը առին վաճառականութեան մէջ եւ հետզհետէ բիչցուցին լատինները : Յետոյ, երկրին ներսը իրենց ունեցած աւելի խորին արմատներուն եւ իրենց թիւին համեմատութեամբ աւելի զօրանալով, յունագաւան եւ հայ բրիտանները շուկաներէն արտաբեցին լատինները որոնք առտիճանաբար զլտորեցան հիմակուան իրենց զբանուած թշուառութեանը մէջ : լատիններու այս կործանումը Ֆրանսայի վաճառականութեան ալ կործանումը կղաւ ատենի մը համար, վասն զի լատիններու մրցակից Հայերը կամ Յոյները օգտակարագոյն համարեցին զիմեջ Ֆրանսայի մրցակից Հոլանտացիներուն կամ Անգլիացիներուն :

Սակայն 1789 ի մեծ Յեղափոխութիւնը աշխարհի մէջ մեզի ժողովուրդներուն պաշտպանները եւ ազատութեան մարտիկները ցոյց տալով, ահա ինքնիրենը մեզի եկան բոլոր այդ ճնշեալներուն համակրանքն ու յաճախորդութիւնը, եւ մենք կրցինք անոնց վրայ հաստատել մեր բարոյական թեւարկութիւնը եւ մեր առեւտրական ազդեցութիւնը : լատիններուն վրայ մեր պաշտպանութիւնն էր որ իբր գործիք կամ պատրուակ ծառայեց մեզի, ուրիշ օրինական տիտղոս չունէինք : Բայց այդ մէկ հասարկը բաւէր, շնորհիւ իսլամներուն եւ ընդհանրապէս արեւելքցիին կրօնական ըմբռնումներուն : Արեւելքցիին համար արգարեւ Աւետարանը կամ Ղուրանը գիտութեան եւ իմաստութեան միակ ազբիւրն է, ուստի եւ պարոյն ալ եւ կեղեցիին մասնաճիւղն է, եւ ուսուցումը քարոզին մէկ երկարաձգութիւնը . լատիններուն մեր պաշտպանութիւնը մեզի իրաւունք կուտար ուզած տեղերնիս ֆրանսական զպրոց բանալ, առանց պարտաւոր ըլլալու թիւրք իշխանութիւնը շողքորթելու կամ կաշառելու այդ հիմնարկու

թիւններուն բացումին կամ պահպանումին համար: Լատինական պաշտպանութեան մեր կողմէն լքումը անյազմելի գոտարութիւններու թուական մը պիտի բանայ մեր բոլոր թէ՛ կրօնաւորական եւ թէ՛ աշխարհական զպրօցներուն համար: Ուրեմն ալեկ մը կը տեսնուի թէ զպրօցական տարածումը վեհանձնութեան կամ ազգային անձնասիրութեան գործ մը չէ մեր կողմէն. զպրօցներ կը բանանք որպէս զի լեզունիս ամէն ուրեք տարածելով մեր անջեւը բանայ շուկաները. ու մեր լատին միջնորդները աներեւութացած ըլլալով կը հետամտինք անոնց տեղ գնել ուրիշ միջնորդներ որոնք մեր աշակերտները եղած ըլլալով, աւելի սիրայօժար մեր յաճախորդները պիտի մնան: Կը սխալին անոնք որ կը կարծեն թէ Արեւելքի մէջ յոռի քաղաքականութեամբ մը Ֆրանսայի միայն բարոյական զօրութիւնը ու պատիւը կը վտանգուի. վաճառականութիւն եւ քսակ ալ խնդրի առարկայ են: Արեւելքի մեր հայրենական ժառանգութեան մէջ մէկտեղ խառնուած են մեր բարոյական եւ նիւթական շահերը. ու չե՞նք անդրադառնար որ իտալացիները ակնպէտ կը սպասեն կաթսիլիութեան վրայ մեր թեւարկութեան լքումին:

Ուրիշ պետութիւն մը սակայն ուրիշ կերպով կը յառաջանայ: Տասը տարիէ ի վեր Գերմանիա ձեռքը կը տարածէ Արեւելքի վաճառականութեան վրայ, եւ իր վարմունքը ճիշդ հակառակն է միւս պետութիւններու մինչեւ հիմա հետեւած ընթացքին: Գերմանիան միախլմանին կողմը կ'անցնի ընդդէմ քրիստոնէին, եւ անվիճելի է որ գերմանական ազգեցութիւնը օրէ օր կ'աճի առանց քրիստոնեայ յաճախորդի: Բայց պէտք է ուշադիր ըլլալ այս նորերեւոյթ վաճառականութեան երկու պայմաններուն: Երրօրայի մնացած մասը թիւրքիոյ հետ նախնական նիւթեր կամ բանուած նիւթեր իբր ապրանք փոխանակելով պէտք է մինչեւ ժողովուրդներուն հասնի, եւ անոնց հասնելու համար պարտաւոր է քրիստոնեայ միջնորդին միջոցաւ երթալ: Գերմանիան պատերազմական նիւթերու մատակարարող է, եւ իր յաճախորդները, մանաւանդ Արեւելք, աւելի կառավարութիւններն են քան թէ ժողովուրդները, ուստի եւ քրիստոնեաներու անձնութիւնները կարօտ չէ: Ու յետոյ Գերմանիա ունի ուրիշ ապրանք մը որ մեծ հաճոյքով պիտի սփռէ թիւրքին երօտական կամ ասիական դաշտերուն վրայ, այն է իր զաղթականները: Փոքր-Սօիոյ, Կիլիկիոյ, Սիւրիոյ կամ Պաղեստինի մէջ գերման զաղութներու հաստատութեան իր ծրագրիները բացարձակօրէն կը յայտնէ, եւ արդէն Եաֆա հաստատուած Պալիերացի զաղթականութիւնները ճամբանցոյց կուտան: Բայց այս զաղթականութիւնները թիւրք կառավարութեան հաճութեամբ կրնան հաստատուիլ, անոր բարեացակամութեամբը միայն կրնան մնալ եւ յաջողիլ, եւ նաեւ պիտի կուտին ալ բնիկ քրիստոնեաներուն վէմ: Ուրեմն երբ Գերմանիա թիւրքին պաշտպանութիւնը իր վրայ կ'առնէ եւ կ'արհամարհէ քրիստոնեաներուն արհամարհանքը կամ ատելութիւնը, կը շարժի իր շահուն համեմատ, ինչպէս որ կ'ըմբռնէ: Բայց մեր շահերը միեւնոյնը չեն, բոլորովին հակառակն են, ուստի եւ մեր քաղաքականութիւնն ալ պէտք չէ իրենէն ներշնչուի:

Կ'եզրակացնենք. Արեւելքի մէջ մեր շահերը եթէ անգլիականներուն եւ ռուսականներուն տեսակէն չեն, բայց շատ մեծ են: Չենք կրնար հրաժարիլ անոնցմէ աշխարհիս մէջ առանց մեր աստիճանէն իյնալու: Ինչ տեսութեամբ որ կը դործեն Անգլիան եւ Ռուսիան, միեւնոյն կարգին վրայ մենք ալ պէտք էր «Սօիոյ կողմէն բացուած» խնդրին մէջ մտնէինք:

(Կը շարունակուի) ԼԱՎԻՍ

Կ Ա Ղ Ա Ն Դ

Կաղանդ...

Աչքս դոց, կը նայիմ...

Ո՞րն է այս երկիրը: Երբեք եղած չեմ հոս. բայց անձանօթ չէ ան ինձի: Տեսնելու կը ճանչնամ զայն իսկոյն, սիրտս անոր կ'երթայ մէկէն. ընտանի, սերտ, ներքին բան մը կայ անոր ու իմ միջեւ: Երկար երազանքներու մէջ, երեւակայութիւնը անոր սարփոտ ճարտարապետը եղած է, մտքին յարածամ փայփայանքները կերպաւորած, սըրտին խանդուն ըզձանքները զայն դաստակերտած են ինձի համար, տարտամ ու սրտ միանգամայն: Ես հոս մազըլցած չեմ այդ լեռներն ի վեր, աղբիւրին մէջ չեմ լողցած, եկեղեցիին բակը իմ խաղերս չէ տեսած, զաշտերուն մէջ ծաղիկ չեմ քաղած, ու այդ տանիքները իմ խոնջ մարմինս չեն պատսպարած: Բայց լեռան բոլոր ձեւերը զաղանիք չունին ինձի համար, աղբիւրին ջրին կարկաշտ ականջներու մէջ կը կլկլայ՝ ձանօթ յանկերգի հծծիւնով. եկեղեցիին զանգակատան բարեկամ բարեւ մը կուտամ, ծաղիկներու հոտ մը ուղեղիս կ'ազդէ ընդօրոյթ, ու երգիքին տակ ծիծեռնակի հին բոյնը կը փնտռեմ:

Իրա՛ւ երբեք եղած չեմ հոս: Ուրիշներու մէջ, իմ արիւնս կրող մարդերու մէջ ապրած եմ այստեղ, ու անոնցմէ ինձի ա՛յնքան խորապէս անցած է իրենց կրած ուղղակի սպաւորութիւնը այս երկրէն որ, անկից հետո թէեւ, հոն եղած եմ միշտ, երազական կրկին կեանքով մը: Դարերու ուժով ժառանգականութիւն մը, յամառ ու կենտալից, Յաւին մէջ զրած իր արմատները ու անոր կազմութիւնը հիւթովը սնած ու ուռճացած, արհամարհած է միջոցը ու հեռաւորութիւնը, ու Հողին, ուսկից բղխած է, անմիջական հազորակցութիւնը հաստատած է անկից անջատուած էակներուն մէջ:

Մասնաւոր անուն մը չունի սեղը որ աչքիս զիմացն է: Քաղաք մը չէ ան, ո՛չ աւան մը կամ գիւղ մը: Ընդարձակ ու բիրականապէս տարածութիւն մըն է: Գիծով մը ու սահմանով մը չո՛րոչուիր: Լեռներ ու դաշտեր, ու նորէն լեռներ ու տափարակներ՝ ջրի ընթացքներով ժապաւինուած, բլուրներ ու ծործորներ, քաղքի փողոցներ ու գեղի ճամբաներ պարտէզներու մէջէ, քարէ տուններ ու յարգած ծածուկ խրճիթներ: Անուններ գնել կ'աշխատիմ իւրաքանչիւր կէտին, զանազանել այս համախոնումը, Մշոյ դաշտ, Ծատախ, Կարին, Հաւաւ, Բասին, Սիփան, Կամրիկապ, Հայոց Չոր, Լուսոնք, Արածանի, Արտամէտ, Գրգուտ, Մօրենիկ, Վարդենիս, Բիւրակն, Տալուրիկ...

բայց կը շփոթուին, իրար կը խառնուին, իրարու մէջ կ'ընդհարուին, ու քիչ քիչ մեծ սնուն մը միայն կը մնայ ամենուն վրայ թեւատարած, — Հայաստան:

Չին կայ ամէն կողմ, յորդ, թաւ ու կախուղ, անաղարտ բաներու սրբութեամբ մը փառիլոզ: Լեռ ու դաշտ ծածկած է ան հոգածու տարփանքով, քաղաք ու գիւղ թաղուած են անոր մէջ մտնող հաճութեամբ մը: Բուխերիկներ միայն կը ծակծկեն դայն պէտուգէն, օդին մէջ զրկելով մտնի զուարթ յորձանքներ պարան—պարան: Ու ցուրտ չէ այս ձիւնը. տաքցնող բան մը կ'ելլէ անկէ, եւ մտերմութեան, գորգորանքի ու խրախճանութեան հրաւեր մը կը յածի անոր վրայ:

Յնծութիւն մը կը խաղայ այս ամբողջ տարածութեան վերեւ:

Ու մաքրիկը որ կը տեսնեմ գիմացս, կը խնդան, ու կ'իններ կը ժպտին, ու պզտիկները, թեւերնին վեր, կը պարեն: Լոյս, աղմուկ, սեւտութիւն ամէն կողմ:

Կէս—գիշերուան զանգակները կը հնչեն աւետաւոր, Նոր տարիի պալուստը իմացնելով. կը հնչեն հրճուալիք, իրարու խրկելով, մօտէ մօտ, իրենց գանգիւնները, ու բերկրութեան երգի մը, գոհարանութեան ալէլուիայի մը պէս կը տարածուի, կը բարձրանայ, կը սաւառնի ասիկա:

Ու սեղաններ կը տեսնեմ, սեղաններ ամէն կողմ, ու անոնց չորս կողմը շարուած են պառաններ ու ձերունիներ իրենց զակներով, հարսներով ու թուներով: Ու առատութիւնը յղփանքով մը կը զեղու այդ սեղաններուն վրայ, ճոխ ու բարի բնութեան մը պարզեւած բարբառները կուտակուած են հոս ժիր ու չարքաշ մարգերու ձեռքով: Գինիի պոզիկը հոն է յաղթապանծ, ու հողէ կուտիկներուն մէջ կը խնդայ ան իր ցոլացիկ կարմրութեամբը: Սախերու մէջ ձագուց մեղրը իր ճերմակութիւնը կը փռէ: Ու իրարու վրայ զիզուած, բուրգի պէս կը բարձրանան նուշը, ընկուզը, չամիչը, պնտուկը, ամպրաւը, թուզն ու պատտեղը, մաշաղի սանձն ու մաշաչիկը, նանիկը, ապասիկը, խնձորները, որոնց բով շարուած են խաղողները, ձմեռուկը, կաղըմսուրը, էժու պտուկը, անկուտ քիշմիշը, աբելին:

Ահա ոտքի կ'ելլէ պառաւը որ սեղանին զլուխը բազմած է. զինիին կուտիկը ձեռքը կ'առնէ, անոր մէջ կը ձգէ իր ճակտին պսպղուն—սոկիներէն հատ մը, ճառագ մը, ու զողջուն ձեռքով կը բարձրացնէ բաժակը. ձայնը ամուր է սակայն, ու օրհնաբեր խօսքերը իր շրթունքներէն կ'ելլեն յոյսերով լեցուն:

— Չեղ ողջութիւն. շնորհաւոր տարի ու բարի կազանք. ամէն տարի բարով հասնինք, ուրախ սրտով: Դառնիկ դատինք, քաղցրիկ ուտինք: Աստուծոյ օրհնենքը ամենուս վրայ: Ամենքս հասնինք մեր մուրափին:

Ու կաթիլ մը կը խմէ զինիէն, յետոյ ամենուն կը խմցնէ պուտ պուտ, ու ամենքը կարգաւ կը համբուրեն իր ձեռքը, մինչ ան կը շարունակէ իր օրհնութիւնները ու մաղթանքները, լաւագոյն օրերու վստահութեամբ մը որ իր նիհար կուրծքը կ'ուռեցնէ: Կոճղն է ան տարիներէն զարնուած, բայց միշտ ամուր ու տեւական, հողին մէջ տարածած իր կենսալիք արմատները որոնք իր գործը պիտի վերսկսին, վերանորոգման, շարունակութեան աւել-

ըր կը բարձրանայ իր կանանչ ճիւղերն ի վեր սրոնք գէպի առաջ, գէպի վեր կը խոյանան յոյսի թռիչքներով:

Սեղան մը, հեռուն, կը հեւայ իր բեռին տակ: Խնչպէս հաճրել անոր վրայ Գաւաշի քաղցրը, Մսկաց մեղրը, Կարկառի զարտէն, Սպայկերախարմը, Շինիձորի մշտիկը, Խիզանի խնձորը, Կարճկանի փոխիկը, Կիւզալաւէրէի ուլիք, Բզնունիքի զայւթը, Մշոյ գաշտի բազարը, Մօտիկանի միրգը, Բաղէշի զարկած քաղցրը, ու պսպղաներուն կոյտը որ կը բարձրանայ խայտաբղետ:

Անգին, տաքուկ բերսիին շուրջը, սրոնց տակ շարուած են կրակով լեցուն հողէ թաղարներ, շալէ բարձրու ու հաստ գորգերու վրայ նստած՝ որիչ խումբ մը Նոր տարիի հացը կը բաժնէ, մինչպէս, աւելի հեռուն, թոնիլին բոլորաբեքը, սլրիկչին առջեւ, բազմաթիւ ճիւղերու բաժնուած հսկայ մամի մը լոյսով, ամբողջ ընտանիք մը լոյլին պալուստը կը ածնէ:

Փողոցին մէջ երգ մը կը վազվառէ հիմակ: Խուսը մը տղաք, ճիտերնին մէկ մէկ տուրակ անցուցած, ձիւներուն մէջէն կ'անցնին ցառքաբելով, գոներուն զարնելով ու երգելով ձայնով մը զոր կ'աշխատին սղորմուկ ընել:

Այսօր կախ է,
Վաղը կաղընդ է.
Տանտիկին, սանտիկին,
Ելիր գնա մարագն ի վար,
Կարճ բոնէ, երկայն կյրէ,
Կամացուկ ուր մատդ չի կյրես:

Ու տանտիկինը գուր կը բանայ, ու տուրակները կը լեցուն թութով, պատտեղով, ընկոյզով, բլիթով, ու «չէն կեցի» ներ կը թռնի մանկական բերաններէն:

Կազանի կորկոտը ու եօթնազգի ապուրը անգին սեղանի մը շուրջը հաւքած են խօսող խնդացող բազմութիւն մը: Բայց աչքս անոնցմէ կը բաժնուի ու կը յառի քիչ մը հեռուն, աղւոր հարսի մը վրայ որ տանը գոմին դրանը առջեւ կեցած, կը կաղընդէ արջառները, կուլուլ նետելով անոնց բոնալիք. չէ՞ մի որ սունէն են անոնք ալ, ու տալին ի բուն աշխատեցան նոյն վաստակին համար, արութեան ու առատութեան հացին համար պատեցան անոնք ալ իրենց տերերուն հետ քով քովի: Կինը մէկ ձեռքով կը շոյէ հիմակ գոմշուկի մը ճակատը, մինչ անասունը, իր բարի աղւոր աչքերը խնդութեամբ լեցուն, անոր միւս ձեռքին մէջ կ'ուտէ հատիկները: Ու հարսը կ'երգէ.

Եկէ՛ք, սիրուն բուշիկներ
Սիրամ ու կարմիր գոյներով,
Չեղի ալ տամ հատիկ կեր
Որ կաղընաչէք եմ բերեր.
Դուք ալ ապրիք տարիներ
Չեր սիրական զաւակով,
Համբուրե՛մ ձեր ճակատներ,
Սիւալի պուտով կոտորներ:

Ու կը ծոխ, խանդակաթ համբոյր մը կը զնէ անասուններն ճակտին վրայ, որ, գզուանքին տաքութենէն հաճ' զլուխը կ'երկնցնէ՝ շոյանքներ խնդող պաղատանքով մը:

Վայելքին ու ժողովան մեծ երանութիւնը կը տա-
րածուի ամէն կողմ, անշրպեանիւղ երէկուան ցաւերը ու
վաղուան հոգերը: Մեծ դադարն է ասիկա, անհետացնե-
լով յայնուօրինակները ու զրկանքները, զաշիք օրերուն հա-
մար նոր ոյժեր պատրաստելով, ամրապնդելով արի հա-
ւասքը սր դարերէ ի վեր այդ հողին կը կապէ զիրենք՝
վհասիկ չզիտցող վստահութեամբ մը, տկարանալ չզիտ-
ցող կտրուով մը: Ու մարդիկը որ կը տեսնեմ զիմացս, կը
խնդան, ու կիները կը ժպտին, ու պզտիկները, թեւերնին
վեր, կը պարեն:

Վերջին երեւոյթը որ աչքիս տռջեւ կը պարզուի, կը
հոլովի ձիւնոտ ճամբաներու մէջէ, ծառերով եզերուած՝
որք իրենց կնգուծի մուշակին տակ կը սիպան: Նորատի
կիներու տողանցութիւն մըն է ան որ զեղէն կ'երկարի,
առտուան մթնշաղին, դէպի աղբիւրը: Ամենքն ալ կ'եր-
թան, երկիւղած ու պատկառոտ, ձեռուրնին հատիկներով
լեցուն, ջուրը կապընդելու, ջուրը սրբազան ու բարերար:
Մայրն է ան ուսկից բարեկեցիկը կը բղխին, որ կ'արգա-
սաւորէ ջանքերը ու կը պտղաբերէ յոգնութիւնները: Ու
նորատի հարսերը, աղբիւրին գլուխը կեցած՝ որ իրենց
առաջին շիկնոտ տարփանքները տեսաւ, ջրին մէջ կը նե-
տեն հատիկները՝ բնութեան մեծ ամուսնութիւնը կատա-
րող, բեղմնաւորման մեծ խորհուրդը տօնող քրմուհիներու
պաշտամունքով մը: Ու հատիկները անոող տանող աշիք-
ներուն խոխոջը զուարթ խնկուծի մը պէս կը ցնծայ:

Քիչ քիչ այս ամէնը ստուերին մէջ կը թաղուի, շրջա-
զիծները ու պատկերները կ'անհետանան ու ամէն բան
աներեւոյթ կ'ըլլայ խաւարին մէջ որ աչքերս կը լեցնէ:

Տեսողութիւն մը կ'անցնի զոր չեմ կրնար որոշել, ե-
րազանքի մէջ կորուսած: Երբոր անկից կը սթափիմ ու
աչքերս կը յառեմ դարձեալ սուտին մէջ, նոյն տարա-
ծութիւնն է որ երեւան կուզայ, նոյն շրջանակն է որ կը
զծադրուի, նոյն լեռները ու նոյն գաշտերը, նոյն փողոց-
ները ու նոյն զեղի ճաւաղները: Բայց ինչո՞ւ անունը որ
ամենուն վրայ կը տարածուի սաւաննաթեւ, արին կը
կաթկթէ:

Ձիւնը նորէն պատած է ամէն կողմ. բայց ահույի
ցուրտ մը կ'ելլէ անկէ. չար ու անողոր: Լեռները խոժոռ
ու դածան կը նային, ու սարսուռ մը կը վազէ անոնց
վրայ: Հոլը կը փչէ կատաղաբար, երբեմն սուր՝ ազոա-
ներու կոխնչի մը պէս, ու երբեմն բուերու, հազարուոր
բերաւոր բուերու հուրլմանը պէս վայոյզ:

Լուսթիւն մը կը տիրէ, ա՛լ չխօսող բաներու ահաւոր
լուսթիւն մը: Հոն է որ մինակ կը ձայնէ, ու անոր մէջ
մորմոքներ կը հեծկլտան ու կսկիծներ կը հառաչեն:

Մա՛րդ չի կայ գուրը: Ամայութիւնը իր սոսկումը կը
սիոէ ամէն կողմ: Ու ամէն բան թախծութիւն մը հազած
է, ա՛լ չապրող բաներու խորին թախծութիւնը:

Մոխրի համ մը կայ օդին մէջ:

Դաշտերը մերկ են, ու ծառերը, կմախքներու պէս
կանգուն, անձկազին գալարումներով կը զոզզան ա-
նոնց մէջ:

Տուները իրարու վրայ սեղմուած, սմբած են, ու
ցաւը ու անձկութիւնը կը պարտին անոնց վերեւ:

Սուղի երկիրն է ասիկա, հիւրամերժ ու անխնդամ:

Բայց ահա երգիքի մը տակ սեղան սը կը տեսնեն:
Բազմութիւն մը նստած է անոր շորս բարբոթիքը, մեծ
մայրը իր զակնկերով, հարսներով, թոռներով: Կաղանդի
սեղան սըն է ասիկա. բայց ո՛չ նոր տարիի հացը կայ վը-
րան, ո՛չ պտուղներու կոյսը, ո՛չ մեղր ու ո՛չ գինի: Թո-
նիրին մէջ կրակը մարած է շատոնց: Կանթեղ մը կը
պլպլայ միայն անկին մը, ու անոր սասանոտ լոյսն է
միայն կենդանի այստեղ:

Որովհետեւ այդ բոլոր մարդիկը չե՛ն խօսիր, չե՛ն ե-
րերար, չե՛ն նայիր:

Աչքերս կը յառեմ:

Ահ, մեռա՛ծ են:

Ու ի՛նչ մահով:

Մեծ մօրը աչքերը փարուած են, ու անոնց խոտչը
կը բացուի, կը խորունկնայ ահաւոր: Վզին վրայ լայն
վերքի մը շուրջ արինը փխտացած է, սեւ ու փայլուն:
Իր բոլը, անդրանիկ զաւակը իրեն կը թնցուցած է իր զը-
լուխը որ մարմնէն անջատուած է: Իր պզտիկ հարսը զի-
մացը նստած է ծիծերը կտրուած, ծունկերուն վրայ սեղ-
մած նորածինի մը զիակը:

Ու ամենքն ալ այսպէս ահուելի վերքեր ունին, ու
կեանքը խոյս տուած է ամենէն:

Բայց չէ՛. կրեք պզտիկ ահա կը շարժին: Ողջ են:
Հագուստ չունին գրեթէ, իրենց սոքերը բոպիկ են, սե-
ղանին վրայ բան մը չիկայ ուտելիք, բայց պողպատի սա-
րութեամբ կեցած են հոն ու կը հսկեն սգաւոր տանը
վրայ: Ու ժամերով ժամերով, արթուն, պզտիկ պահա-
պանները կը նային իրենց մոռեկներուն, զխաակից աշուր-
ներով որոնք կը վառին:


Ու իրենց աչքերը անհամար բաներ կը զուրցնն իրենց
անկենդան սիրելիներուն: Անոնց գէմքերուն վրայ պայ-
ծառութիւն մը կը տիրէ հիմակ, ու մեծ մայրը, ոտքի
կանգնած, անհուն վստահութեամբ մը ուտեցած, գողգո-
ջուն ձեռքերը առաջ նետած, իր օրհնութիւնը ու հաւա-
տաւոր մայրթանքները կը զրկէ պզտիկներուն, որոնք իրեն
կը նային միշտ, զխաակից աշուրներով որոնք կը վառին:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՏԷՆՆԻ ՔԱՅՆԵՅԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկին
զրկել առ

M. L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.



ՆՈՐ ԿԵԱՆՔԻ բաժնեկինն է Եւրոպայի համար
տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար
տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոլար: Կը հրատարակուի
ամէն ամսու 1 ին եւ 15 ին:

Կը խնդրուի անոնցմէ որոնք այս առաջին թիւը պի-
տի ստանան, յայտնել վերագրեալ հասցէին թէ կը փա-
փաքի՞ն որ Նոր Կեանքը կանոնաւորապէս զրկուի իրենց,
ներփակելով միանգամայն իրենց բաժնեկինը: